

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՎԵԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայրենիքի համաստեղ)

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՒԴ ԱՐԱՐՈՒԱԾ ԵՒ ՄԵԿ ՎԵՐՋԱԲԱՆ

Հ Բ Յ Ա Ր Ա Ր Ո Ւ Յ Ե Ր Ե Ր

Հ Ե Պ Ի Խ Ա Վ Ի Խ Ա Վ Ի Խ Ա Վ Ի Խ Ա Վ Ի



891. 99

21-24

1911

Ա. ԳՈԼԻՔՈ

Գուգածացուկան Ընկերութեան
մայիս Առաքը Բնիկ Փողոց թիւ 27

391.99

Մ-24

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՎԵԱՆ

NOV 2011

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ


(Հայրենիքի համաստվր)

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Հինգ ԱՐԱՐՈՒԱԾ ԵՒ ՄԵԿ ՎԵՐՁԱԲԱՆ

Հ Յ Ո Ս Ա Ռ Ո Կ Ե Ց Ե Ր Ե

Հ Ե Պ Ի Ւ Ա Կ Ի Ւ Ո Ր Դ Ի Ւ Ե Ր Բ



1911

Ա. ՊՈԼ. ԽՍ

Տպագ. Օսմ. Գործակցական Բնկերութեան

Պատր. Ալի ճառտէսի Սէփերբիլէր Փողոց, թի. 27

24 JUN 2013

91808
26163-Կ2.

Դ-1-ՃԳ!ՃՃ

Սիրելի Հայր,

Հրատարակութեան և ներկայացման իրաւունք-
ները վերապահուած են հեղինակին որդիներուն
և անոնց կնիքը չը կրող օրինակները անվանեն:



10942-54 (Կ575-56)

Երբ մեռար, մատաղ էին ամեննս ալ: Թէեւ
կեանիիդ մինչեւ վերջին օրը աշխատեցար, բայց
ասպարէզդ սպառող, հացնող հազիւ ապրե-
ցուցած էր մեզ ու մեզ: Մանդ վախճան դրա
կեանիիդ նե՞ մեր աղբատիկ ապրուսին ալ:
Տնիսական հարստութիւնը որ կը մնար մեզի
իրեւ ժառանգութիւն պատիւդ էր միայն, առ-
խատողի, անիեղծ մարդու պատիւը: Ու այդ պա-
տիւդ ապրեցուց մեզ պատիւով.

Երկրին ազատութեան նես մեր ձեռքը հասաւ
ձեռագիր մը Վարդան Մամիկոնեան (*), իրեւ
թէ մրին բաներէ արձակուած: Մեզի նոր հրեն-
ուանին մ'եղաւ այդ գործդ: Ահա տաղով հրատա-
րակութեան մեզի նես ժառանգակից կ'ընեն
քսլոր ընթեցողներդ սրտիդ հատութիւնն: Քար չը
դրինք վրադ. Եւ նույնամէ ազատ թողով ուկոր-
ներդ, սպագրուած սոյն ձեռագիրդ իրեւ ար-
ձանական կը կանգնենի լիւատակիդ:

1 Յունիոս 1947
Խոսքիւդ

Հեղինակին Օրդիներ

(*) Ձեռագիրը մեզի հասցուցած է մեր հանգուցեալ
հօր առաջերաներէն Տեար Մկրտիչ Պետրական Ռօօօռօցի.
անհոն երախտագիտութիւն իրեն:


Ա Ն Գ Ե Ր

1. — ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ (Հայոց (Սպարապետ))
2. — ՎԱՍԱԿ, (Սիւնեաց իշխան)
3. — ՅՈՎՈՒՔ (Հայոց Կաթողիկոս)
4. — ՂԵԽՈՆԴ (Երեք).
5. — Ա.ՐՃԱԼԻՒՐ ԿԱՄՍՍ.ՐԱԿՈՅՆ (Վարդանի նիզակալից նախարար)՝
6. — Ա.ՐՃԱԼԻ ՊԱԼՈՒՆԵԻ (Վարդանի նիզակալից նիստ.)
7. — ՄԻՀՐՆԵՐՍԵՀ (Հազարապետ Պարսից)
8. — ՊԵՏՐՈՍ (Սուս բահանայ)
9. — ԶԱՆԳԱԿ (»).
10. — ՌԵՏՈՒՆԻ (Զօրակրոն)
11. — ՍՈՒՐՄԱԿ (»)
12. — ՇՈՒՇԱՆԵԻ (Վարդանի աղջիկը)
13. — ԳԻՍԱԿ (Վասակի որդին)
14. — ԲԱՆՏԱ.ՊԵՏ (ծեր մը՝ Պարսիկ)
15. — ԾՊՏԵԱԼ ՄՔ (Պարսից արքային խորհրդական
և Վարդանի բարեկամ Վրացիկ կեղծ Պարսիկ նախարար մը).
16. — ԴԱՀՁԱ.ՊԵՏ
17. — ՎԱՍԱԿԻ ՍՊԱՍՍԻԱՐԸ (Վրացի մը)
18. — ՀՄԱՅԵԱԿ (Վարդանի կրտսեր եղբայրը).
19. — ՄԻՒՆԻ-ԾԵՐ, Վասակի նայրը)
20. — ԶՈՐՔԵՐ

Վ Ե Բ Ջ Ա Բ Ա Ն Ի Ա Ն Ջ Ե Ր

1. — ԲԵԼԻԱՐ
2. — ՎԱՍԱԿ
3. — ՄՈԳ
4. — ԿԱԿԱՐԴ
5. — ԴԵԽԵՐ
6. — ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ (Ա. Բ. Գ. Դ.).

ՏԻԳՐԱՆ Յ. ՄԱՆԱՎԵԱՆ



ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

Ուսուցիչ մը, անցեալին մեկնած ուսուցիչ մը, մանաւանդ հայկաբան մը, կարծէ՞ արդեօք լճթեցման նիւթ ըլլալ Հայ լճթեցողներու, անոնց որ, առ առաւելն, պիտի գիտնան թէ եկած ու անցած է ան:

Բայց ինչպէս կրսենք, ուսուցիչ կայ, ուսուցիչ ալ կայ: Ու Տիգրան Մանավեան անոնցնէ է որ, իրենց անցին վրայ, մեկնելի ենք, կը բողուն հետքեր զործողի, խօսդի եւ գրողի:

Երկ բացարձակ արժանիքներ ալշ' տեսնենք այդ ապրած կեանիքն վրայ, պիտի զսնենք արաքերական առաւելութիւններ իր զործողի կիանիքն մէջ, իր բմբոնումներու, իր խօսերու, իր զործելու մասին, որոնք չպիտի դատրին առաւելութիւններ ըլլալու հանի որ անոնք, իրենց ժամանակին մէջ, համեմատաբար՝ աւելի վեր բարձրացած են հասարակ մակերեւոյք մը, ու եղած են, իր սեփական դրօւմով իր առանձին զործերը, իր յատոկ խօսերը, իր յլացումին գրուածները:

Աղոնցմով՝ Տիգրան Մանավեան կունենայ իր առանձին ըշշանակը, ուր կը մնի իբրև դեմք մը, ունենալով իր զիժերը, միմիայն իրեն յատուկ:

Ա.

Այդ զործողը, իր անունով ծանօթ իր ժամանակին մէջ, Տիգրան Յ. Մանավեան, ծնած է 1841ի, աղքատ ընտանիքի մը զաւակ, թերացի: Իր հայրը, Յովհաննես Առաւելեան, մրգավանս եղած է, — ապրուսի միջոց մը, որ կերեւի հազին թէ դիւրութիւն տուած ըլլայ կեանիք վրայ բաշեւել դժբախս թիսանիք մը:

Հայրը, — հազին տասը տարեկան եղած իր Տիգրանը, — կրս որ ինն իր զիտուն նար տեսնէ. իրեն համար զսնէ ապրուսի միջոց մը իր սեփական աւխատանեովն: Փոքրիկ բարեխախտութիւն մը միայն որ իր հօրեղբայր, — ծե-

ռունի ուրարակիր Գրիգոր, իօր գուրզուրաննն ունեցած է կանխաւ, եւ փոյք տարած է որ մանկիկ Տիգրանը Իհշ մը մտաւոր կրթութիւն առնե իր բաղին մէջ:

Տիգրան աւ'յերս կը մտնէ սպարանի մը մէջ, ուր կուսանի վիմագրութիւն, միեւնայն ատեն՝ միջոց գտնելով կը շարունակէ, իբրև ուսանող, Մեծ-Վ. կիր խան՝ դասեր լսելու: Մտացի, ուժիմ տղայ, յառաջդիմութիւններ կընէ:

Իր խառնուրդը՝ զրտ, կրտս, ըմբոս, ամսուած ամօրինակ դեպէերով ցոյց տուած ըլլալու է իր նկարագրին կամ բնաւորութեան հատու գիծերը, բայց ո՞վ պիտի հետաքրքրուեր աղքատիկ տղու մը կեանենիր որ, հայրենի խնամքի զուրկ, բողուած իր նակարագրին, սփառուած էր աշխատիլ իր փոքրիկ ձեռքերովը, ու մատաղ հասակի մէջ՝ կեանիք կոխւը մղել:

Աւրիչեն պատիք պահել իր անձին վասնգովը, աս տեսուած է վտանգաւոր կոխւք մը մէջ, ուր նետուած է խիզախ պատանին՝ փրկելու համար Յոյն տղեկի մը կեանիք: Անձնանուիրութիւն մինչեւ անձնազոհութիւն, աս ալ ունեցած է իր նոզիքին խորո. Աւետիս Սուրենեան կը պատմէ թէ, Բալու գտնուած ատեն, ան եղած է իր փոքր տարիին պատսպանը: Դիւեր մը երբ հաւարի կը վազեն հրացաններով, վտանգի վայրը մօսեցած ատեն, Տիգրան ենքաղելով թէ զնդակներ պիտի փոխանակուին մուրին մէջ, իր ենեւը կառնե թնկերը, որպես զի երե կապարը հասնի, իր կուրծին գայ շիտակ եւ փոքրիկ Սուրենեանը շվանգովի:

Աղոնեն զիծեր են իր նկարագրին մէջ եւ խուօր զիծեր:

Յանկար աներեւոյ եղած է Տիգրան. ու տարիններով ալ ո՞չ ո՛չ տեսած է զայն Պոյսի մէջ:

Բ.

Այդ տշանին, 1861—1869 ապրած է Բալուի բաղցահայեաց վանիք, նրաւագործ Մկրտիչ վարդապետի հով. իրեն հետ է ուրիշ տղեկ մը. 11 տարեկան, Աւետիս Սուրենեանը: Աղոնեն, իրենց հաշիւովը Հայաստանը լուսաւորելու գացած են նրաւագործին հետ:

Տիգրանը, ալդ տասաւորութեան գործը երե ոչ ուրիշ կերպով, սկսած է վիմագրութեամբ նրաւարակեյու թերթ մը, Արեւակ անուն, եւ անոր պէս բաներ: Թիեւ գործը պէտք եղած կարեւորութիւնը սացած չէ, բայց գաղափարը ինքնին ուա՛ս սիրելի է անուուծ.— սպարական լոյսը ուղղակի մայր-երկրին մէջ կեսի մը վրայ դնել:

Պատանի Տիգրանը վիմագրական դյափի խաղերով զբաղած ատեն, իրեն մեծ բարեքախսութիւն եղած է որ վանիքին մէջ բացուած է դասարան մը, եւ Հաւաւցի ուսուցիչ մը, Անդրեաս Կատարկանց, Հայերէն դասերովք օգտակար եղած է ո՛չ միայն իր աշակերտներուն, այլև Տիգրանի եւ Սուրենեանի:

Կր յիշեմ Տիգրանը տեսած ըլլալ 65—66 ին, երկայն հասակաւ մարդ մը, սարկաւագի տարազով, ուժեղ ձայնով, տգոյն, նրբաւար: Իր երկայնութիւնը, — ինչպէս տեսայ ետքեն, — իմ հինգ—վեց տարեկան երախայի մասաղութեանս արդիւնքն եղած էր.— հասակ մը՝ ուր ամեն չափահաս տարիք մեծ ու երկայն կերեւի: Իրեն համար կըսէին թէ անվախ էր, կտրին: Բայց ինչ որ ամեննեն լաւ կը յիշեմ, սա է որ ուա՛ս կը սիրեր նրացանի խաղը, գրերէ միւս իր ձեռքին տակ կունենար հաս մը. կսխաւը, նապասակն իր զնտակին ներբեւ կը զնորուիին արինաբարաւ:

1869ին դարցած է Պոյսի. աւելի լաւ Հայերենով մը, որ մտակած է վանիքի գիրեթեռն մէջ: Տանեակ տարիները բոյ մը պարզած են Տիգրանի կոխւք մը մասին որ ունեցած է, զինուորականի մը հետ: Ու ալ ազատ է Պոյսի մէջ, ոչ լրտեսներ կը վազեն ոսիկանատուն, ո՛չ ալ ոսիկանատութիւնը հետաքրքրուած է անցած նացով մը:

Գ.

Խրիմեանի պատրիարքութեան օրով իբրև ուսուցիչ զացած է Մոռսործ, ուր ամուսնացած է, եւ մտանեկան յարկի տակ: Իր աշակերտները որոնեն տակաւին ողջ ին, կը յիշեն իրենց եռանդուն ուսուցիչը, Տիգրան Մա-

նավեան: Ու կերեւի որ իր ուսուցչուրիւնն ալ, ստացուած փորձերէն եսիր սկսած է որու զոյն մը ստանալ այդ տեղ: Խօսելու եւ գրելու ողին եկած է իր մէջ զարգացած, դպրոցին դուրս ալ հետաքրքրած է՝ հանուրին հաշակը, հետաքրքրութիւնը կրելու մածումներով: Ու իբրև ամենէն լաւ միջոց՝ ընտրած է բարենք:

Ժամանակին նիւրերը զուտ ազգային են այդ բուականներուն. Եկեղեցին ալ, իր մքուրիւններովը, իր լալկան երգերովը, իր սեւերովը, Ազգ պատմութեան հետ բնբացակից է: Գաղրական, ցիրուցան ժողովուրդի մը համար, այդ երկու նիւրերն ալ եական էին, զարգօնի առաջին ձայներ: Տիգրան, իր մէջ ունի այդ երկու ձայներըն ալ, — Ազգ պատմութեան ու եկեղեցիի ձայները:

Այդ բուականին գրած ու հրատարակել տուած է Գայդահան բարերգութիւն մը:

Խաղը ներկայացուած է նոյն ատեն Թուսուրօյի մէջ, ու ոգեւորած քարմ սերունդ մը որ նոր արթնցած է եւ սկսած աւելի հետուն նայի զինքը ուշապատող ծովին ու երկին: Ունի Պատուհանի Մուրհակ մալ:

Անկէ եսիր գտնուած է նոյն պատմուվ էտիրնէ խանի մը տարի եւ դարձած է Պոլիս: Գրողի համբաւ ունի ա՛լ ուսուցիչ է. կայցել զանազան վարժարաններ: Դում-Գաբու, Ենի-Գաբու, Հիւանդանոց, Սամարիա, Խասպիւլ իր ուսուցչական գործունեուրեան վայրերը եղած են: Իր աշակերտները անսարքեր գտնուած չեն իրեն համար: Ինքը, ո՞ւնից խումբի մէջ, ուժի, բրոստուրեան ողին է, պատիւ մըն է աս իրեն, ըլլալով այն սակաւալորներէն որոնք անձնական արժանիքի նետ իիշ իիշ առաջ բերած են անկախ ուսուցիչներ:

1888ին ստեալ կր տեսմէի զինքը երկարուդիի մէջ, Սիրենին դեպի Մագրի-զիւլ: Ինչ նիւրադանց կերպար իմ այդ օրերուս, ես՝ Սամարիա: Տժգոյն մարդ մը դարձած էր, կուրծք ներս հածուած: Ատամենի ցաւերով կը տառապեր: Բժիշկներու տուած հրամանզին համեմատ, խաղողին նիւրը պիտի ծծեր՝ կեղեւն ու րինը դուրս

տելով. դոյզն զերմուրիւն մը պիտի բլար աս. որ նիւրերով պիտի տագներ զինքը. իր հառուած մորքն ու չորցած ունկուները: Աստիճանաբար կիշներ դեպի վար. կեանքը կանուսէր:

Ու սակայն: նոյն իսկ այդ օրերուն, զարհոււրելի եր Տիգրան: Յարութիւն պատրիարքի նետ բուռն վեն մը ունունեցած էր եւ իր դատնուրիւնը սրսկած հրապարակի վրայ: Պատրիարք նրաման տուած էր . որ Մանավեանը զրկեն իր դասերէն, — հին առուես, որ սակաւին ասոր կը պահէ իր բարմուրիւնը, իբրև անկարող վրեժականը կազուրդ. հացով զարնել ուսուցիչը: Ան մինչեւ վերջը պինդ մեաց իր կուրի իրաւուններուն վրայ. հոգիովը աննկուն, անբնկրկելի, միւս խազախ ու գոռացող իր նիւրուած ու մառուած կուրծեովը:

Դեկտեմբերի ցուրտերը իջան: Քանի մը անգամ ա՛ չգտայ զինքը ողեկասրին մէջ: Ու օր մին ալ 1888 նոյն չգտայ զինքը ողեկասրին մէջ: Դեկտեմբերի 1888 նոյն ամսոյն 7ին բերքի մը մէջ կարգացի քէ մեռած էր Մանավեան, իր գրպանին ելած ՀԱՐԻԿ ՓԱՐՍ, բողոք արի մը, (1) վեց արու զաւակ, ամենն ալ անշափահաս, 4—11—14 սարեկան:

Իր հայերէնի ուսուցչուրիւնը, իր կակծազին մահուրն անմիջապէս եսիր, տեսակ մը դրդում եղաւ ինձի իր վրեժը լուծել Յարութիւն պատրիարքէն, ու այն ատեն բան մը զրեցի բունալից ոնով: Հանրութիւնը, իսկոն ցրեցուած, օգնուրեան փուրաց Հայ լեզուի ուսուցչին փոքրիկներուն, -- բերք սփոփանի մը, ո՛րտան կարելի եր յուսալ զոնէ այն ատեն, առաջին անգամ, հրապարակի վրայ:

Դ.

Իբրև ուսուցիչ, հմուտ հանչցուած էր Մանավեան իր նիւղին մէջ. ո՛չ մեկ տեղէ զանգաս լսուած իր սաներէն: Մար մուն պատառիկներ ցոյց կուտան որ իրավա սորված է մեր հին լիզուն, եւ սիրելով զիտէ. իբրև աշխարհաբարի գրիչ, մած է ժամանակին վեններուն մէջ. իր

(1) Տիգրին Աննա Մանուկեան,

բաժինն է կոխի մասը, կոխին մեջ ալ՝ յարձակում։ Եթի իր ոստիք, ուժգին բափով մը, առած է իր նաևիներուն մեջ, ա՛լ կը խաղայ անոր հետ տամաբանական հարցերով, վագրի պէս որ, կ'ըսեն, յազենալի ետք, եթի իր սամոնքը պարպատուն է, աշխերը արիւնով լի, կը խաղայ իր զօհին արիւնոց զլուխին հետ մինչեւ որ հունը տանի իր բարերուն վրայ։ Հին Մասիսներու մեջ կարելի է գտնել զինքը։

Վերջին գործ մը, իբրև նոր ժառանգութիւն՝ եկած է իր որդիներուն ձեռքը, Ռուսորոք, Մանավեանի աւակերտներու միջնորդութեամբ, և աս է յառաջիկայ բաներախաղը, Վարդան Մամիկոնեան։

Նիւր մըն է աս որուն վրայ թրուացած է մեր բաներախան շրջանի մանաւանդ առաջին շրջանի մեջ։ Ոչ ժամանակը, ո՛չ ժամանակակիցները արուեստի պահանջող եղած են. կը բառ էր որ ուրուագրուած դեմերը յագուրտ սային հայրենասիրական տաք զգացումներու։ Վարդան անունը, իր ամենեն անյաջող ուրուագրութիւնովն ալ սիրելու ու ծափերու վրայ էր։ Մանավեանի «Վարդան»ը ծափուած է ու սիրուած։

Եկեղեցական տիպարներն ալ, որոնք կան գրին մեջ՝ այն հազուագիւտ ոգիներն են մեր պատմութենեն մեզի եկած, որոնք հմայութիւններ են արդեն։ Ու Մանավեան, Ազգի, Հայրենիքի, Եկեղեցիի յուղումներով վիրաւորուած, գրի առեր է իր «Վարդան Մամիկոնեան»ը։

Իր պատիւն ալ սա է որ իր դիսցազնը, տակաւին այս օր ալ ամենեն ճախապատիւ տեղը կը բռնէ այդ անունով երեւցած բաներախաղներու մեջ։ Իր ամենեն խասապահն ընթեցողն ալ եթի փոխադրուի այն օրերուն մեջ ուր մեծ ցնցումի պէտք կար Ազգային գաղքական զանգուածներու մեջ. ուր մեր հայրենի երկրին անունը ծաղրի ու հեղանիքի նիւր էր. Վարդան Մամիկոնեանի պէս գործեր դեր մը ունեցած են մեր սկզբնական զարոնքին մեջ։

Ու պատիւ այն զաւակներուն որոնք իրենց տառապագին, աշխատող, պարկեւս հօր մահութեն ետք երկ 100 փարայի զաս ուրիշ նիւրական հարասութիւն չգտան, այսօր իրենց ձեռքին մեջ կունենան զիրենտ, հատորիկ մը, ուր այդ հայրը կը բռնու իր ուրին անխարդախ սերերէն իմ երակներէն, իր ոգեւորութիւններէն։

Խոկ այս տողերը գրողը որ անոր գործին մշակներէն, դպրոցական կեանքի մեջ է, իր այս կենսագրուկանովը երեւ չի կարծեր ամբողջական պարտք մը կատարած ըլլալգիք իր կրցածը բատ ըլլալու համոզումը ունի Տիգրան Մանավեանի փախստական յիշատակին։

Մ. ԿՐԻԹՃԵՍԻՆ

(Հրանդ)

1 Յունուար 1911,
Խւկուցար։



Մանավեանի հանգիսը.— Բալուայ մէջ.— Եր ուսուցութիւնը.— Գրական զործերը.— Տնական զործերը եւ բարեսիր երկարացործը.— Հայ լեզուի ուսուցութիւն: (1)

Նախորդ շաբթու ուրբաթ օր Խասդիւղի սուրբ բլուր առարուցաւ ուսուցիչ մը , Տիգրան Մանավեան իր յուղարկաւորք էին իր պաշտօնակից եղբայրք , մտերիմք , Ա . Ստեփանոսի քարտղիչ վարդապետն (2) եւ Եպիսկոպոս մը (3) որ հանգուցելւոյն երկար կենակից եղած է :

Մանավեան , իրեւ համեստ ուսուցիչ հայերէն լեզուի , սակաւուց խօսիցը միտոյն նիւթ եղաւ ու «ազատեցաւ» , անա վերջին բառը՝ զոր իր մտերիմք իրեւ արձանական յիշատակի , ձգեցին իր ցուրդ գերեզմանին վրայ և դարձան արցունքու աչօք : Իսքը զո՞ն է արդեօք իրեն ընծայուած այդ մտերմական մեծարածքէն , չ'զիտեմ զայս , միայն ոս յայանի է որ ա՛լ չխափտի կրկնէ իր հանապազօրեայ օրհներգը . «գժբախտ Մանավեան» և բլրին տակ խօսվայոյլ ուսուցիչը ա՛լ հանգիստ է բլրին վրայ . հոն ո՛չ թաղականի զօրութիւն կայ , ո՛չ բարձրադոյն ազգեցութիւն և ո՛չ իսկ անիրաւ և անիմիզ գանձապես : Հանգիստ , այս բառը տւելի պատշաճաւոր է Մանավեանի յիշատակին որ ժիր մարտիկի մը սիէս կը գլորի խոնչ և լքեալ պատերազմէն :

* *

Ուսուցիչ մը՝ որ խղճի մտօք զրկած է Ազգ . գաստիարակութիւնը և բաւական լոյս ունի իր խնամոց յանձնուած մանկուուն ընձեռելու , ո՛րչափ ալ անշուր և անշչունչ ի գերեզման ապառւի . իր ետեր կը թողու Ազգ . Կեանք մը . ըստ որում , Մանավեան , ուսուցիչ Ազգ .

(1) Սոյն կենապրականը ամրողաթեամբ քաղած ենք «Արևիլի» 1888 գելքմբեր ամառայ թիւերէն , որմէ Եղիս մաս մը արտասապած է իր «Դար» ամսաթերթին մէջ:

(2) Գեր . Յակոբ , Աշոտ Եպիսկոպոս Փափազեան

(3) » Հմայեակ Եպիսկոպոս Դմառքսեան:

լեզուի , 25 տարւոյ կեանք կը թողու մեր վարժարանաց մէջ :

25 տարի , ո՛րչափ դիւրաւ կարտասանենք . այլ ուսուցիչ մը քանի օ՛ն գժուարութեամբ կը բարդէ զայս իրարու վրայ . ո՛րչափ բան կար ու կարողութիւն ապաւած է մինչեւ այն ատեն երբ կարող կը լայ ըսել թէ ահա 25 տարի Ազգ . վարժարանաց մէջ կը նետեմ , եւ ատոնք են իր աղքային կեանքը :

Մանավեանի Ազգ . կեանքը Բալուէն կասի . 1861 թուականին հրաշագործ Մկրտիչ Եպիս . զնա իր հետ այդ գաւառը տարած է , իր մեկնելէն ետքն ալ Տիգրան հոն մնացած է : Ըսդ ազօս իմն կը յիշեմ որ զնա տեսուծ ըլլամ , սեւ մօրուք սպիտակ ու նուրբ երիտասարդ մըն էր : Այս ատեն կը սէն թէ շատ բան գիտէ . մանաւաեղ քաջ է եղած . հրացանն իր սովորական խաղովեքն ըրած է . Մանավեանի անունը , իր մեկնելէն ետքն ալ , մեր վանուց մէջ մնացած էր , չ'ճանչողներն ալ ստէպ լսած էին իր անունը : 84 թուականին , մեր Անդրէաս վարժապետ կիւրտէկ առաւոս մը կանուխ կամոջին վրայ կը քալէր :

Ուր կերթաս . հարցուցի :— Խասդիւղ , ըստ , տեսնելու համար իմ մտերիմներէն մին , հետաքրքրութիւնու գոհացնելու համար փափառքեցայ գիտնալ մեր խեղճուկ վարժապետն բարեկամր զոր ունէր Խասդիւղի մէջ , և կարժապետն Սիգրան Մանավեան , և այն օրէն ալ իման ինքն Տիգրան Մանավեան մեր վանքի քաջ Տիգրանն էր , եւ ցայ որ Մանավեան մեր վանքի գիտն Տիգրանն էր կրկնակի սիրով սիրել զնա , զի մեր երկրի , մեր վանքի համն ունէր ինձ համար , և յարդանք կը տածէր առ նա իրեւ կէս հայրենակիցս : Թէ արդեօք կը լուսաւ Տիգրան Բալուի մէջ , և ի՞նչ արդիւնք ունեցաւ Տիգրան Բալուի մէջ , չեմ գիտեր :

Բալուէն մեկնելէն ետքը , կարծեմ , կը կամի իր ուսուցչութեան կարեւոր թուականը , այսինքն այն պատերազմը զոր մինչեւ իր մահացաւ նախունթաց օրը , պատեղ միացման դէմ , պատերազմ յուսահատութեան դէմ ,

պատահազմ մեր մնամէջ հոգաբարձութեան դէմ, պատահազմ մեր թաղական աղաներու դէմ:

Ի՞նչպէս որ երբ մարդ տեսնէ սպիներով զարդարուած կուրծք մը և նսեմ ճակատմը կրթնած իր զինուց վրայ, չի տարակուամիր լսելու որ սա պատերազմի հրդեներէն անցած է, նոյնպէս ալ Տիգրանը տեսնող ամէն ոք դիւրու կը համոզուէր որ քաջ կոռոզ մը եղած էր իր նուիրական զինուորութեան մէջ. վէրքեր ունէր հոգաբարձուաց սուրերէն. վերքեր ունէր բարձր խորհրդներու զէնքերէն: Իր արտաքինն ալբնաւ հրապոյր չունէր. անհոգ հագուած, անյարդար կը թողուր իր մազերը. նիհար և աշնչափ վախտ էր որ անշուշտ կոռուելով այրելով սպառած էր: Այսու ամենայնիւ բաւ և շատ իսկ էր քիչ մը խաւնել զնա, և ահա կը տեսնէր այդ մաշած տաշուած մարդուն քով գիւրագրգիւս զգացումներ՝ որք հրեղէն հոսանքի պէս՝ ի դուրս կը յարդէին: Աչքէ անցնելով մեր հնա պատուելիներու կետնքը, յորոց բազումք ծռելով ծռելով՝ մինչև անարգութեան ստորնագոյն աստիճանը տարին Ազգ. վարժապետութիւնը, և տեսնելով զ Տիգրան՝ որ մինչեւ իր յետին և աւազելի օրն ալ ոչ մէկուն առջեւ ծռեցաւ, մարդ միրաւի իսկ իսկ կը զարմանար և մեծապէս գոյն կը լլար, որ Մանավեան երիտասարդ ուսուցիչներու ոմանց չունացածն ունէր, անվախ բնաւորութիւն, իրաւանց վրէժինդիր սզի, քննադատելու, ծաղրելու և ձաղկելու եռանդն ու կարողութիւն:

Զծռեցաւ, այս, և սակայն քանիցս չվթայուած խուլ մւնչիւններ նեցած է իր թղթերուն վրայ, որք լոյս չտեսան, և քսնիցս ունեցաւ հառաջանքներ իր կրծոց տակ խեղդուած. նախորդ Ռւսումնական խորհրդոյ ծրագրին դէմ Ազգ. թերթի մը մէջ քննադատութիւններ գրեց: Յօդուածը խմբագրուած էր թէպէտանինամ ոճով, այլ ամէն էջթաթիսուած է դիւրագրուով հօր մը և փորձ ուսուցչի մը չնջովն ու հոգութիւն:

Ասպարագ կը զլանայ աղքատաց իր սակին դէմ դու դի՞ և մի զրկեր զանոնք ուսումն և գիտութեան քաղցրագոյն ճաշակէն և հաճոյքներէն, որք երկնաւակ զուարթուններ են՝ նոցա անողոք ճակատագիրն մասսամբ իւիքի հաշտութիւն ածելու»: Զաւակաց հայր ուսուցիչը, արդարակ ցամամանէ զրղեալ կը խայթէ, սուր սլաքներ ալ կը թօթափէ. աեղ մը մեր պաշտօնական ուսմանց յայտագիրը քրքիւով՝ Քուլովի սայլին յիշատակութիւնը կընէ և կըսէ այսպէս. «Այս առակը շատ աղէկ կը յարմարի մեր գաստիալակութիւնն ինդրոյն, զոր ազիտութիւնը դէպի խաւար ասնիլ կուզէ, շահամոլութիւնը դիմի իր արկզն, ակնեկալութիւնը պէսվի իր նպատակը»: Տիգրան կը ճանչէր մեր մեծ մարդոց ակարութիւնը, արիութիւնը կըսեմ. գիտեր որ գժուարութեանց պիտի բաղմի, սպառնալիքներ պիտի լոէ: Եւ յիրաւի ալ, հազիւթէ իր մէկ քննադատականը ի լոյս կենէր, հետեւեալ օր կանուխ պաշտօնական թուղթ մը, թոյնի մէջ թաթխուած զրկուած էր բարձր տեղէ մը⁽¹⁾ արտաքսել զնա իր մէկ վարժարանէն, երկրորդ օրն ալ պաշտօնական աղքարարութիւն ընդունեցաւ որ եթէ զզաւանեար պիտի արտաքսուէր Ազգ. բոլոր վարժարաններէ: Տիգրան, իրը ու կուոյ մարդ, սպառնալիքէ վախցող չէր, բայց արի տես որ իր կենաց հետ մշանչնեապէս կապուած էին կին մը և վեց հատ արու զաւակներ: Ուստի հացի սպառնալիքը Դամոկլէսի սուրէն աւելի երկիւզալի էր իրեն բնականաբար, և ահա լւեց, ծռեցաւ այն երկաթի մարդն իր մանուկներուն սուջեւ, և այնունետե մեր հրապարակն եղած էր չոգիկասքի ժողովրդական թիւն, ուր բարձր եռանի գրեկասքի գովովրդական թիւն, ուր Տիգրան իր քննադատութեան մնացորդը կաւարտէր «Ահ հաց, կ'անիծէի գքեղ բոլոր ուժովս, եթէ Քրիստո իր մարմինը քեզմով չը շինէր»:

Մանավեան չափով մը զրական ալ մարդ էր. Գայլ գահան անուն թարերգութիւն մը զրած է, թէն չտեսած եմ դայն, Վարդան մըն ալ ունի, զոր տեսած եմ ի Ծու-

(1) Այդ թուղթը զրկուած էր նոյն ատենուան պատրեարք Յարութիւն Պէհապետականի կողմէ:

տոսթոյ : Որչափ կը յիշեմ, բաւական լու գործ մըն էր . Յովսէփի կաթողիկոս և զեռնդ աղէկ նկարագրուած էին : Յողուածներ դրած էր այլեայլ ազգացին ինդրոց համար . իր վերջին դրածն եղաւ . ուսանաւոր մը՝ որ դրուած է յառաջիկայտարուան օրացոյցին⁽¹⁾ սկիզբը, և յադուած մը, դաւանութեամբ լի դրութիւն մը, յաւիտենական բովոք, որ անտիպ մնացած է, և զոր ախառ, չկրցի ձեռք ձգել : Անշուշտ օր մը լոյս կը անենէ և վայ անոնց . . . : Շատ բան այսպէս է, ինչ որ կարելի չէ եղած . հրասարակել ՚ի կենդանութեան, մահը երեւան կը բերէ զայն : Սրդ ասմաք մէծ գրական կեանք մը ենթագրեն կամ ոչ, սա յայնի է որ Մանավեան, իրբեւ հայ ուսուցիչ, բաւական ասպեցաւ իսկ իրեւ հայր՝ վաղամենիկի զնաց . այլոց ուսուցանելու միշտ զբաղեալ, բնականաբար քիչ ժամանակ կունենար իր զարդացմանը նուիրելու : Իր կեանքը պիտի բլայ և մերն ալ :

* *

Մանավեան իրբեւ տմւանացեալ մարդ, պարկեչտ հայ և համեստ հայր մըն էր . ինքնինքան իր մանկինեւ բով ու անովք . ոչ մէկու մը կարօտ ըրաւ իր առնու, ցաւագին միշտակներ չթողուց իր զաւակներուն և ինո՞չ՝ որոց անձնուէր եղած է մինչեւ իր վերջին օրը . դուրսը՝ տրամառութիւնը և տանր մէջ ինդութիւն հաւգած է միշտ . տրտմառութիւնն իր վերջին օրի միտին չէ կրցած ծածկել . մտերիմներէն մէկը կը պատմէ որ երբ յանկարծ կոչուեցանք Մանավեանի տունը և զանք զնու անկաղի մէջ՝ անակնկալ խիթով մը զարնուած կոչեց իր Սրամն և ըսաւ . «Զաւակս, ուսումդ շարունակէ» և արցունքն իր աչքերուն մէջ չողաց : Կը խորհեր անշուշտ բարեմոյն հայրը թէ ինչո՞ւ չէ կարող իր բարոյական կտակին հետ նիւթական կտակներ ալ ընել իր որդւոց . ինչո՞ւ 25 տարի Ազգին մանկաւոյն շունչ, կեանք, կուրծք սպասելէն ու տաշելէն եաքը, կարող

ՄԱՊՐ իր յետին վայրկեաններւն մէջ՝ ոսկիի ծրար մը յանձնել իր կնոջն և յանձնարարել որ իր որբերը խնամէ և չթողու որ այլոց ձեռքը նային կարօտագին նայուածքով : Դառն է այս Եղիա՛, դառն իբրև զօշինդր . . . 25 ապրուան Ռւսուցիչը իր մարելու վայրկեանին ալ խաղաղութիւն չէ ունեցած : Իսկ թեթև զոհունակութիւն մը զոր ունեցած է, այս է որ պարտքեր չթողուց : Զի երեք ոսկի՝ զոր պարտք էր իր դրացի բարեսիրտ երկաթագործին՝ իր մահուան նախընթաց գիշերը հատուցած է :

Այս պարտքը բաւական մասեր ունի իր մէջ և պէտք է զայն աւանդել իր կենսագրութեան հետ իբրև լրացուցիչ և վախճան իր ուսուցչութեան և իր կենացը : Խասպիւղի Թաղ, մնառուկէն բաւական պահանջք ունեցաւ վերջներս Մանավեան : Ցրաազին օր մը ստակ կը պահանջէ՝ ի մէջ բերելով աւանին կարգ մը պէտքեր, մանաւանդ ածուխս : Սակայն, ինչպէս շատ անգամ, նոյն օրն ալ ոչինչ կ'ընդունի : Մերկէր^(*) աղա, բարեսիրտ երկաթագործը, ակնաջալուր, կը խնդրէ Մանավեանէն միասին վար իշնէլ : Ուղղակի ածխավաճառին կ'երթայ, և 600 քաշ կշակել ապավուր, որպէս թէ իրեն համար, Մանավեանի տունը կը զրկէ, և կ'աղաչէ միանդամայն որ բնաւ փողթ չ'ընէ, երբ որ զրամ ունենայ՝ այն ատեն հատուցանէ : Այդ պարտքն էր զոր Մանավեան քսան օր չ'անցած, հատուցած էր մէկ օր առաջ երեկոյին տակաւին ի տուն չմտած : Օրհնեալ ըլլայ երկաթագործը, որ մետաղէն կայծ և սրաէն մարդասիրութեան զգացմունք թռչեցնել գիտէ, և այսպէս նշաւակ ըրած էր այն մած մարդիկն՝ որ Ազգին զրամն Ազգ . լեզուի ուսուցչն տալու յօժարութիւն ունեցած չին :

* *

(*) Տիգրան աղա Մարտիրոսեան.

Հիմա ասոնք ամենքն ալ անցած են . Մանավեան կի թողու կին մը իւր տան մէջ և վեց հաս արու մանչեր , սիրուն անուններով սիրուն զուռակներ ազգին , Վարդան , (1) Վահրամ , Արամ , Հրանդ , Մանավեան պարապ կը թողու հայ լեզուի ուսուցչաց մէջ իր աւելի և այս տեսութեամբ ալ մեծ կորուստ մըն է Տիղրանի մահը :

Քանի մը տարիներ առաջ Հայ լեզուի ուսուցիչներ ունէինք . այսօր այդ թիւը տակաւ անձկանալու վրայ է . և այս անշուշտ իր ներքին պատճառն ունեցած է : Մակարերելլ դժուարին չէ , կտակներով , եկեղեցին կանթեղներուն արուած զրամն այսօր յուժմէաս կը սպասի տգիտութեան ձեռքով . հայ լեզուի արուած կարեւորութիւնը ջնջուած պէտք է նկատել այն ամսական վճարմամբ՝ զոր ամէն թաղ կը նշանակէ իր եկեւմտացոյցին մէջ : Եւ այսպէս քանի մը տարի ալ հազիւ անցած , պիտի տեսնենք որ նոյն իսկ կեդրոնին մէջ , ուր Ազգը դրամ կը վասնէ , ուր ժողով կայ , Պատրիարք կայ , Վարդապետ կայ , նուրբական շատ բաներ ունակու եղած են և ազգային սրբութեամնց դրօշակը տիղմերու մէջ : Ինչո՞ւ Պատրիարքարանը նախորդ ուրբաթ օր իր ներկայացուցիչը չունելը Տիգրանի գերեզմանին քով . հայ լեզուի ուսուցչութիւնը միշտ նուրբականութիւն ունի . մեր Ազգային և հեեւորական կեանքին մէջ բան մըն է այն . և այս անկման ժամանակին մէջ՝ ով որ ոգւով Ազգային լեզուն կը գրիէ և անոր ասարածմանը շունչ , կեանք և ոգի կ'սպառէ , քահանայէ մը աւելի սրբութիւն ունի մեր պատմութեան առջեւ : Այսպէս , ով Մանավեան , դու ինձ համար սուրբ մըն էիր . . . :

16 դեկ. 1888


ՀՅՈՒՆՔ

Միւլտար

Մ. Կիւրենեան

(1) Մանավեանի զաւակներն են Միրինան , Արամ—մեռած—Յարութիւն Սրիկ , Վահրամ , Հրանդ եւ Մկրտիչ .

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.



ՏԵՍԻԼ Ա.

ԱԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎ ԱՐՏԱՇԱՏՈՒ ՄԷՋ



ՅովսեփԿարողիկոս , Վարդան , Վասակ , Արշաւիր , Արշակ եւ ուրիշներ

Յովսեփ .— (Ձեռքը նամակ մը բռնած) Եսոս վասիուկ է խնդիրը . . . Հայաստանի վերջին ժամն ալ հնչել սկսաւ : Վարդ .— Այդ ի՞նչ մահագոյժ լուր :

Յովսեփ .— Այս նամակը . . . : Վասակ .— (Հասկյայ) Ի՞նչ պիտի ըլլայ ստոր որունակութիւնը :

Յովսեփ .— Հայաստանին վերջին դատակնիքը : Վասակ .— (Իմ վավագս է ատիկա) :

Արշաւիր .— Թշուա՛ռ հայրենիք :

Վարդ .— Իմ շունչու Հայաստանի սիրոյն համար միայն կուրծքիս ներքեւ կը խաղայ , հայր , շուտ յայտնէ այդ վտանգաւոր նամակը , որ սրտիս մտասանչութիւնը փառագագաւոր էթէ Հայաստանի գրկութեամը զոհ մը կը բաւէ սպարծանքով կ'ըսեմ , ահա իմ անձս :

Արշակ .— Հայաստանի գրկութեան համար՝ ամէն ճըշմարիտ Հայ բազուկներ պատրաստ են զէնք առնելու և անոր պաշտպանութեան վահաններ՝ անշուշտ մեր կուրծքերը պիտի ըլլան :

Վասակ .— Այսո՛ , և ալ կ'ուխտեմ (Հայաստանի սրութիւնները Հայ արիւնով ներկելու)

Յովսենի .—Այս համակը , վեհազուններ , մոգական շունչ մըն է :

Վարդ .—Ի՞նչպէ՞ս :

Յովսենի .—Դուք լու գիտէք որ Պարսկաստան հաղար տեսակ մեքենայութիւններով յաջողեցաւ Արշակունի թագը խելելու , հիմա ալ յայտնապէս ձեզի իր կառավարութեան դուռը կը հրաւիրէ , որպէս զի մեր անապաշտապան հայրենիքը գիւրութեամբ սուրի և բոցերու մասնելով իր չար նախասակին հասնի ... երանի՛ թէ աս համոզումիս մէջ խարսուած ըլլայի :

Վասակ .—(Այն ժամանակ իմ համոզումս խարսուած կ'ըլլայ) Ասիկա Ձեր կարծիքն է , ևս չեմ յուսար որ Պարսկաստան տասնեկ զարոնի նախասակ մը ունենայ , դուք կը յիշէք որ մեր նախնիքներն ու մեր քաջերէն շատերը անոր աէլութեան մեծամեծ և հաւատարիմ ծառայութիւններ ընելով , չաս անգամ անոր սիրոյն համար իրենց զէնքերով մէկանը ինկամ են անոր բաղդին առջե ... Արդ , ի՞նչպէս կարելի է որ փախաղարձ չարիքնիւթէ ... ևս ձեռքս խղճիս վրայ դնելով՝ համարձակ կը վկայեմ թէ , այդ տեսակ անօրինակ վասութիւն մը ընա՛ւ չմտաբերիր ... ասոնք վեհերու սրտի երեւակայական կատաձներ են :

Վարդ .—Վասա՛կ , Պարսկաստանի ձախող քաղաքականութենէն չը խարսուինք , եթէ արեւաց պատմութիւնը ուշադրութեամբ աչքէ անցնենք , նա մանաւանդ աս վերջին զէպքերուն վրայ լուրջ գիտողութիւն մը ընենք շուշառվածներ մեր միաքը համոզել և մեր խիզճը հանդարասեցնել , թէ Հայաստանի օտարասակական ոգին՝ միշտ կոյր նպաստակներու ծառայած է , անոր համար իր թափած արիւնէն զատ ուրիշ վարձք չէ՛ ունեցած ... Պարսկաստան աս ձշմարտութեան քաջ համոզուած , օրէ օր Հայերուն արիւնով իր գաճը կ'ամրապնդէ և թերեւս անոնց դիակներով միահեծան զաւազմանի մ'ալ տէր ըլլայ համօրէն տիեզերքին սպաւնապէք մը ըլլալու ... չատերուն զաճը կործանեց , հիմա ալ պատրաստուած է պետական վերջին

Հարուած մը տալ մեր Հայրենիքին ... այս' մեզի կ'ուզէ անոր զրկէն հեռացնել , որ դիւրութիւնամբ անոր վրայէն արեան դէտ մը քալեցնէ :

Արշաւիր .—Ասիկա յայտնի ձշմարտութիւն մըն է ... առանց յարդելու այդ նամակը , պատասխանատուութիւնը դէնքին յանձնելու է :

Յովսենի .—Վայրկեան մը տռաջ պէտք է ազդին հայրենասիրութեանը զիմել .

Արտակ .—Ատ է փրկութեան ապահով միջոցը .

Վասակ .—Ասանկ չարազուշակ պահու մը մէջ խոհեմութեամբ շարժելու ենք ... ապահով փրկութեան պէտք ունինք :

Վար .—(Խոռվիւած) Բարեկա՛մ , մարդուս ձշմարիս խաղաղութիւնը իր հայրենիքն է , անոր վիրաւորուած պատույն մէջ խոհեմութիւնը կը լոէ՛ ... քանի որ այս պատույ խողիր եղած է՝ խոհեմութիւն և խողաղութիւն սկզբունքիս զէմ են ... ասանկ վոանդալի պարագաներու մէջ աս բառերը նշանակութիւն չեն կրնար ունենալ ու չեն կարող զիս զէնենից ընել թէկ վախճանը սե զեւեզման մը ըլլայ :

Վասակ .—Վարդա՛ն , չաս աղէկ , պատերազմինք , սակայն ի՞նչ հակակիւու զօրութիւն ունինք Պարսից ահարեկու զօրաբանակներուն զէմ :

Վարդ .—Քաջութիւնիս :

Արշաւիր .—Իրաւունքնիս :

Արտակ .—Մեր արդար յուսահասութիւնը :

Վասակ .—Կիրքով չխօսինք ... ասոնք բաւական չեն Յովսենի .—Հայրենիքին սէրը անոնց դաշնակից է :

Վարդան .—Ուրեմն , վասա՛կ , ինչպէ՞ս կ'ուզէք , երթանք անոր միապիտական լրածին Պարանո՞ց ծոենք , մեր ազատ բազուկները Պարսկական շղթաներով ծանրացընենք ... ի՞նչպէս կրնանք անտարբեր մնալ , երբ տեսնենք որ անոնց պիղծ ոտքերը կ'սպառնան՝ մեր նուիրական սահմանները կոխուտել , մեր սրբազան Տաճարնե-

4

րը պղծել, ու մեր հայրենակիցներուն անմեղ արիւնով զուարձանալ . . . այս յիշատակները, ո՞հ, այս դառն յիշատակներն երբ կ'իջնան ճշմարիտ Հայումը սիրառ ու անոր արիւնին մէջ կը խառնուին անկէ վերջը, ա՛լ մահն ալ իր սեւ դոմքովը չկրնար զայն սոսկացնել:

Վասակ.—(Արշաւիրին դառնալով) Դուք ալ ձեր կարծիքը յայտնեցէք:

Արշաւիր.—Ի՞նչ որ ըստ Վեհագունը՝ մենք ալ նոյնը կ'երկրորդենք . . . Պատիւը՝ կեանքէ աւելի թանկագին է, Ազգային պատիւի նախատինքը մեր արիւնով ջնջելու ենք . . . մարդս մեռնելէն վերջը պէտք է ապրի:

Վասակ.—Արշաւիր, մեր անխռհմութիւնը կրնայ անտափտ մը զարձնել Հայաստանը:

Արտակ.—Քանի որ մարդկային երկիւղի և կոյր հնաշ դանդութեան պիտի ծախենք մեր Ազգութիւնն ու կրօնքը, աւելի աղէկ է որ Հայաստան երիքով մը դառնայ:

Վասակ.—Արտա՛կ, ծանր կ'ըլլայ Զեր պատասխանառութիւնը:

Արտակ.—Այդ ալ թո՛ղ ապագան դատէ.

Յովսէկի.—Ուրեմն ի՞նչ պէտք է ընել, դուք ալ ձեր կարծիքը յայտնեցէք:

Վասակ.—Պէտք է հնագանդինք և անմիջապէս Պարսկաստան երթանք, մինչև որ բաւական զօրութիւն պատրաստենք:

Վարդ.—Եթէ հոն շղթայակալ արգիլուինք, ո՞վ պիտի պաշտամն կ'անգնի դժբաղդ հայրենիքին.

Վասակ.—Ես խորհած եմ:

Վարդ.—Ի՞նչպէս:

Վասակ.—Այսօրուընէ պէտք է Յունաստանէն օդութիւն խնդրել:

Վարդ.—Եթէ չը հաճի:

Վասակ.—Անկարելի է:

Վարդ.—Ի՞նչ վաստահութիւն ունիք:

Վասակ.—Պատճառներ կան:

Յովսէկի.—Ուրեմն յայտնեցէք:

Վասակ.—Յունաստանի սահմաններուն վրայ Պարսկկ ձեռքերու գործած աւերակները՝ Յունայ սրտին մէջ, ժառանգական զայրոյթ մը ձգեցին, որ փոքրիկ կայծի մը կ'սպասէ բռնկելու, քանի որ այս պատճառը կայ, Յունաստան մեր դաշնակցութենէն օգուտ քաղելով, անշուշտ ոտքի պիտի եղնէ, այն ժամանակ Պարսկաստան մեզ արշիլով՝ Հայաստանի վնաս մը չկրնար հասցնել:

Յովսէկի.—Ատոլ չենք կրնար վաստիկ, Յունաց ամելութիւնն ալ ժառանգական է:

Վասակ.—Անձնականի մի մտնէք, Հա՛յր, պատույ զգացում կրող ազգ մըն է, ևս Պարսկաստանի համար Յունայ կարծիքը հարցուցի, անոնք պատույ վրայ խօսք տուին մերզէ չը բաժնուիլ և ի հարկին զէնքով իսկ օդ-նել . . . աւասիկ (ծոցէն նամակ մը հանելով կու տայ Կառողիկոսին) Դուք և Սպարապետը միայն կրնաք կարդալ. (գաղտնի կը կարդան):

Վարդ.—Շատ անգամ մեր վաստահութիւնը խաբւած է:

Վասակ.—Ես իշխանութեամբս կ'երաշխաւորեմ: Գիտնալու է որ, այս փափուկ ժամանակիս մէջ, մինակ Հայաստանի զօրութիւնը չարաչար կը տուժէ, իսկ այն աւագարկած հնարքովս շատ դիւրութեամբս պիտի յաջողինք Պարսկաստանի թագը Յազկերտին հակտին վրայ փշելու:

Յովսէկի.—Ուրեմն վերջին որոշութիւն ըրէք, ժամանակը կ'անցնի:

Վասակ.—Թէ որ այս եղանակը համոզողական կ'երեւի ձեզի, հիմակուընէ Հմայեակը զրկենք Յունաստան, մենք ալ անմիջապէս համբայ ելնենք:

Յովսէկի.—Այսպէս որոշենք:


Վարդ.—Թո՛ղ այդպէս ըլլայ:

Արշաւիր.—Շատ աղէկ:

Արտակ.—Շատ աղէկ:

Վարդ.—Ելնենք, ժամանակը անզին է:


Վասակ.—Ես հոս ձեզի կ'ապասեմ (կ'երթան):



ՏԵՍԻԼ Բ.

Վ Ա Ս Ա Կ Ա Ռ Ա Ն Զ Ի Ն

—Մեծ նպաստակ մը ունիմ, որուն յաջողութիւնը Հայաստանի վրայ շա'տ սուշիլի պիտի նստի, այս ճշմարտութեան՝ խիզնս, սիրս և նոյն խկ հայ արխւնս կը վկայեն, սակայն ի՞նչ ընեմ, փառասիրութիւնն ամէն զգացութերուս վրայ բռնացած՝ Հայաստանի թագին կը փափաքի, որ եթէ Հայոց արեան մէջ ալ թաթխուած ըլլայ, դարձմալ զլուխս պիտի զնեմ. . . կը ամսնեմ որ ժամանակն ալ նոյն թազը ինծի կ'երկնցնէ, ահա այսքան զօրութեամբ ալիրած է քաջաքականութիւնս Պարսիկ սիրտերու մէջ. . . Արդէն այս խնդրոյն դժուարութեան մէկ մասը լուծուած է, որուն համեմատ Աղուանից, Յունայ միւթիւնները Հայաստանէն քակած եմ, կը մնար մինակ որ Հայաստանն ալ մատնեմ, այս պաշտօնն ալ ահաւասիկ կէս մը զիւրացուցի. . . ա՛հ, եթէ մեր քահանաներէն ակնկաւլած աւետիսներս ալ առնեմ. անկէ վերջ գրեթէ ամէն խոչնդուներ քայլերուս առջեւէն վերցած կ'ըլլան. . . եթէ ասոնք տլ չը բաւեն նարատակիս, դարձեալ պիտի աշխատիմ՝ մինչեւ շատ աշխարհներ արեան Ովկիանոս մը դարձնեմ. . . փառասէրին համար խիզն չկայ. . . լսեմ. . . ծպուելներ այս կողմը կը դիմեն:



ՏԵՍԻԼ Գ.

Նոյն, Պետրոս եւ Զանգակ (Ծպետներ)

Զանգակ. — Առանձին էք:

Վասակ. — (Ծահոթ ըլլալու են) Ներեցէք չկրցաց ճանչնալ:

Պետրոս. — (Դէմքերնին բանալով) Հաւասարիմներդ:

Վասակ. — (Ուրախութեամբ) Ա՛հ, իմ հաւասարիմներս զործալրեցիք հրամաններս:

Զանգակ. — Շատ զիւրութեամբ:

Վասակ. — Անհաւասալի կը թուի ինծի:

Պետրոս. — (Աւետարան մը ցուցնելով) Կը տեսնէք այս Աւետարանը. . . ասիկայ որքան ալ մարդոց միթարութիւն ու անոնց փրկութեանը համար պարզեւած է երկինք, բայց մեզի նման պաշտօնեաներուն ձեռքը խարեւութեան գործիք եղած է. ի՞նչ չարիք և ի՞նչ բոնութիւն որ գուք զալանի անզամ չէք կրնար ընել, մենք ասոր միջոցաւ հրապարակաւ ալ կրնանք գործել:

Վասակ. — Այս' Քրիստոնէութիւնը, այն մողական քառը, աշխարհ մանելն ի վեր, բանութիւնը կը հալածուի, ասոր հետ մէկանը իշխան մը՝ Քրիստոնէական դիմակով, բանաւոր դարերէն աւելի կրնայ ոճիրներ գործել եթէ Ձեզի նման պաշտօնեայ մը իր ձեռքին մէջ ունենայ. . . այս համոզումով՝ սիրս հողիս և բար զալանիքներս ձեզի յանձնած եմ:

Զանգակ. — Դուք անհոգ եղէք. . . Կոյր ռասմիկին դըլուիէն սահման մը ձգած ենք և ո՛ւր որ ուզենք կը վարենք, անոնց ստացուածքը, անոնց պատիւը, անոնց զալանիքները և մինչեւ խկ անոնց կեանքը մեր ազգեաթեան տակ են. . .

Վասակ. — Վաղինակին զործն ի՞նչ ըրիք:

Պետրոս. — Հօրիզորդ համո՞ր կ'ըսեք:

Վասակ. — Այս' :

Պետրոս. — Ուսոր զործը՝ զեղով մը լնիցուցինք:

Վասակ. — Ուրեմն անոր կահ կարստիքն ապահով կը նամ ժառանգել, բայց անոր տառամորգը ձեզի պիտի ասմ. . . աղէկ միտքը եկաւ, հայրս զեռ կենդանի է:

Զանգակ. — Այդ աւետիսը տալու եկած ենք:


Վասակ. — Ի՞նչպէս:

Զանգակ. — Արտազու դաշտէն անհետ ըրինք ան, ուր իր սովորութեան համեմատ աղօթելու ելած էր, անծանօթ քարայրի մը մէջ ձգելով, հաստատուն որմով մը մուտքը ծածկեցինք. . . թերեւս մինչեւ հիմա փոշին ալ մնացած չէ:

Վասակ.—Ուրեմն ապահով ըլլամ... քանի որ արդ թշուտա ալեւորը կենտանի վկայ մըն էր իմ արարքներուս, Հայաստանի կառաղի զայրոյթը միշտ անձիս դէմ կը զրգուէր... գրեթէ անմատոց թումբի մը նման փառքիս դէմ արդելք եղած էր... մեռա՞ւ անիկա, ուրեմն Հայաստան ալ իր վերջին շունչը տուտու... յաջող ճանապարհ մը բացուեցաւ բաղդիս առջեւ, որ թշնամիներու արիւնու դիմիներու վրայ զահա հաստատեմ... հօրս հայրենասիրութիւնն ալ վարձարեկու համար, աւասիկ կ'ուստեմ իր Ազգին երակներէն արեան վտակ մը քարեցնելու իր շիրմին վրայ...:

Պետրոս.—Այդ ամէնուն պիտի յաջողիք, բաղզը ձեր քայլերը չկրնար կապել, ձեր հաճոյքները պակուած են, և եթէ ուրիշ համաններ ունիք աւասիկ պատրաստ ենք:

Վասակ.—Շնորհակալ եմ ձեր մատուցած հաւասարիմ ծառայութիւններէն, հիմա խնդիրն այն է՝ որ մեր կուսակիցները բազմապատկելու աշխատինք... ուրիշի ձայն կը լսեմ, չուտով հնուայէք (կ'երթան):



ՏԵՍԻԼ Դ.

Վասակ, Ռեսունի, Սուրբակ

Ռեսունի.—Տէ՛ր իշխան, Պարսկաստան պիտի երթանք:

Վասակ.—Այո՛, ես ալ ձեզ կ'ուզէի աւսնել:

Սուրբակ.—Մէկահ՞զ պիտի գանք:

Վասակ.—Ո՛չ... դուն, Սուրբմա՛կ, հիմա ուզլակի ստորին Հայք երթաս, Մամիկոննեան Վասակ իշխանին ներկայանութիւն իմ կողմանէ ըսես իրեն որ Հայոց համար օգնութիւն պահանջելու խնդիրն առ այժմ յետաձէ... այս կարճ առաջարկութիւնէն ան շատ բան կը հասկնայ, մեր քաղաքականութիւնը մէկ է... ճանապարհորդութիւնդ մարդ չը գլունայ... գնա՛ (կ'երթայ): Դու ալ Ռինդ մարդ չը գլունայ... գնա՛ (կ'երթայ): Դու ալ Ռինդ մարդ մ'է եղեր) (կ'երթան):

Հաղպարապիտին ներկայանաս, աւետիս կու տաս իմ կողմանէ թէ ամէն բան կարգի դրած է, այս ալ իմացուը թէ նախարարները համոզած եմ, և այսօր ճամբայ պլատի եղանք... չուտ գնա՛, (երթալու կ'ըլլայ) բայց, կեցի՛ր, պատուէր մ'ալ ունիմ:

Ռեսունի.—Պատրաստ եմ լսել:

Վասակ.—Պատգամաւորութեանդ գործը գլուխ հանուէդ վերջ՝ անմիջապէս Սիւնեաց երկիր դառնաս... Վաղինակ հօրեղբայրս հոն մեռած է, անոր չարժական ու անշարժ գոյքերն ու կալուացները իմ կողմանէ հսկողութեան ներքեւ դի՛ր:

Ռեսունի.—Շա՛տ լաւ: (կ'երթայ)

ՏԵՍԻԼ Ե.

Վասակ, Վարդան, Արշակ, Արտակ եւ ուրիշներ

Վասակ.—Ճամբեցի՞ք Հմայեակը:

Վարդ.—Անմիջապէս:

Վասակ.—Ուրեմն ժամանակ չը կորսնցունենք, մենք ալ համբայ ելնենք:

Վարդ.—Մէկ քանի վայրկեան ինձի շնորհեցէկ, մէկ հաստիկ զաւակս անդամ մը զէթ անսնեմ, որ իմ մինակ միթթարութիւնս ու վերջին յոյս է: Ես շուտով ձեզի կը հասնիմ. իսկ եթէ կը բարեհաճիք, դուք ալ զացէ՛ք՝ Զեր ընտանիքին վերջին հրաժեշտ մը տուէք, քաջ գիտէք որ ասանկ հրաժեշտի մը մէջ անմահութեան սփոփանք մը կայ:

Վասակ.—Ստոյք է, սրտէս խօսեցաք. մենք ալ երթանք նախ ընտանեկան պարականուակիննիս կատարելու (Ասիկա կնամարդի մ'է եղեր) (կ'երթան):



ՏԵՍԻԼ Զ.

Վարդան առանձին

—Փառասէր իշխանի մը մահանցը գաւաղանը տիեզերական գործը կը թողուր խաղաղ օկ շնչել, ես զերգիս վրայ բոհացած չը թողուր խաղաղ օկ շնչել, ես

աղասի ծնած Հայ մ'ըլլալով, կ'ասոեմ այդ բանութեան գործին, կ'արհասմարհեմ զայն կրող դռառզ ձեռքը և այս ճակատս ասոանկ անարդ բանութեան խոնարհելու չափ չստորհանար, սակայն կը տեսնեմ որ իմ փառասիրութիւնս՝ Հայրենիքը պիտի տուժէ, անկէ վերջը, անինս գերեզմանին մէջ հանգիսա չիպիտի մնայ, այդ պատճառաւ որոշած եմ երթալ Պարսկաստան... ա՛հ, ո՛րչափ քաղցր է կեանք մը, որչափ սիրելի է զաւակ մը, բայց ասոնցմէ սիրելի սիրելի եւ քաղցր է, մարդու հայրենիքը, որուն սիրոյն համար ահա անձս մտնուան վտանգներու մէջ կը նետեմ և իմ մէկհասոիկ զաւակս ահա օտար խնամքներու պիտի յանձնեմ... ա՛հ, Հայրենիքի յիշատակներն ու անոր Սրբազան Բագրիններն այսքան անուշակ են ճշմարիտ Հայու մը համար:

ՏԵՍԻԼ Է.

Նոյն եւ Շուշանիկ

Վարդ.—Աղջիկս:

Շուշան.—Հայր իմ (կը զրկէ):

Վարդ.—Միտուն զաւակս, անզամ մ'ալ կրկնէ այդ քաղցր անունը, թերեւս անզութ ճակատագիրն՝ ասէի ետք զիս բոլորովին զրկէ այս հանոյքէն:

Շուշան.—Փափուք սիրսով վշակրով լեցաց այդ վերջին խօսքու, ի՞նչ կ'ըսես, զիս կ'անիծե՞ս... արդէն վաղամեռիկ մայրս կ'ողբամ ասանց զինքը հանչնալու և երբ հայրս ալ կորսնցունեմ, բոլորովին թշուառ որբ մը պիտի ապրիմ՝ ձեր նուրիբական շիրիմներուն վրայ իմ կեանքս դառնութեամբ և արցունքներով մաշեցնելու... չէ՞ք սիրեր ձեր աղջիկը, այսչափ անզութ էք:

Վարդ.—Չէ՛, Շուշանիկս, (ո՛հ, դիրին չէ մասառ սիրս մը վշտացնել) ո՛վ որ աղասի եւ անկախ հայրենիք մ'ունի, նա որբ չէ՛. թէեւ անոր մայրը զերեզմանին մէջ հանգչած լլսց եւ հայրն ալ աղաստութեան նուիրէ իր կեանքը:

Շուշան.—(Հօրը աչքերը լեցուած տեսնելով) ինչո՞ւ կուլաս, հայր, ի՞նչ տիտոր խորհուրդներ միտքու կը յուղեն... քանի որ աղաստութեան համար կեանք եւ մահ միւնոյն արժէքն ունին, ուրեմն ես ի՞նչպէս կրնամ քու զիրքէդ բաժնուիլ:

Վարդ.—(Ո՛վ Աստուած, փափուկ մասները կուրծքիս վրայ ասնելուս սրախ բարախումը զգացի) Շուշանիկս, քեզի երբէք մինակ չպիտի թողում ու եթէ հաշուէ ինծի բաղդը, ուր որ ալ երթամ, հոգ չէ, յաւիտեան զիրկս պիտի հանգչեցնեմ աս նազելի ճակատ:

Շուշան.—Եթէ անսասոյդ բաղդին կապուիլ պէտք է ապա ինչո՞ւ կ'արգիլէք զիս ձեզի ընկերանալէ, դուք թերեւս կը կարծէք թէ ձեր կեանքով մինակ փրկութիւն կ'ըլլայ, բայց հայրենիքս մեծ իրաւունք ունի՝ աղաստութեան համար ինձմէտ ալ ծառայութիւն ապասելու:

Վարդ.—Իմ ամուսինս, իր մօրը կենդանի սպասկերը, անոր գէմքը, անոր ձայնը... ո՛վ Աստուած, ի՞նչ նմանութիւն, մահուան մէջ ալ միսիթարութիւն կայ եղեք):

Շուշան.—Ինչո՞ւ չէք ուզեր ինձի լսել... ինչո՞ւ չէք ուզեր ինձի պատասխանել, եթէ հայշենի աղաստութիւնը արխնով պէտք է ծախու առնել, պատրաստ է կեանքս և ալ պիտի զամ:

Վարդ.—(Աղիքներս կը խռովին, ի՞նչպէս հնար է առանց վշտանալու համոզել մասաղ միտք մը) Աղջիկս, չես սիրեր Վալարշակը, դու անոր բազուկներուն մէջ ասքաղցրիկ աչքերդ բացիր լրյափ մէջ, քու մանկական ձիւչերուդ՝ միշտ անոր խնամքները կը պատասխանէին, քու անզոյց մանկութիւնոդ միշտ ան կ'աղասէք վասնզներէն որ ամէն վայրկեան անմեղութեանդ կ'աղասնային... հիմա քեզ դարձնալ անոր կը յանձնեմ, մինչեւ ես ... (ո՛վ Աստուած ի՞նչ ըսեմ):

Շուշան.—Դուք ալ կը վկայէք թէ մարդս պէտք չէ պարտազանց զտնուի, որչափ մանուկ էի առրիշներուն խնամքին կը կարօւէի, հիմա որ արբունքիս հասած եմ,

հայրենիքիս ծառայելու եմ. . . կը պաղաստիմ, հա՛յր, մի՛ արդիւէք զիս:

Վարդ.—Աղջիկս, որդիական առաջին պարտք՝ հնաշաղանդութիւնն է. դո՛ւն մտիկ ըրէ ինծի, Վաղարշակը քեզի պիտի խնամէ, մինչեւ ես. . . (ինչո՞ւ այս վերջին խօսքը շրթունքիս վրայ չեմ կրնար դնել):

Նոււան.—Կ'աղաչեմ, հա՛յր, մի այդչափ յանդիմաներ զիս, ահա հնաղանդութեանս զրաւականը: (ծունկի գալով) տե՛ս, ոտքերուդ տակ կը դանուիմ. քու զաւակը, ներէ իր զգացութերուն չափազանցութեանը (Վարդան երթալու կ'ըլլայ) ո՞ւր կ'երթաս. . . :

Վարդ.—Մեր հայրենեաց թշնամիին:

Նոււան.—Հրաման ըրէ՛ք, ես ալ ընկերակցիմ:

Վարդ.—Ի՞նչ ընելու:

Նոււան.—Գէթ արցունք թափելու:

Վարդ.—Անգիտութիւնն անոր խղճին դուռները դոցած է, քու արցունքները չեն կրնար բանալ:

Նոււան.—Աղջկան մը արցունքները գէնքերէ աւելի կրնան նուամել մինչեւ իսկ դուռոց ու վայրենի սիրս մը:

Վարդ.—(Ի՞նչ անմեղ խորհրդածութիւն) Դուռնաւելի մեծ կոչում մ'ունիս, անոր պատրաստուէ. . . դուն առայժմ Վաղարշակին քով կեցիր. . . (ժամանակը կ'անցնի, ինծի կ'սպասան) . . . Աղջիկս, դու աշխարհ գալուդ՝ մայրդ գերեզման մտաւ, այն աղէկէղ կրտուսով մինակ քեզի մխիթար թողուց, և այն օրէն ի վեր Վաղարշակին ու իմ գրկիս մէջ տարաշած անդօր թեւիկներդ՝ սկսար օրէ օր կ'աղդուբել կեանքդ. . . հիմա ինծի ընկերանալ կ'ուղիս, չե՞ս զիսեր որ քեզմով պիտի յաշորդէ իմ օրինաւոր սերունդս. . . :

Նոււան.—Շատ առարկութիւններ ունիմ, սակայն վեհակուն հօր մը առջեւ չեմ համարձակիր, զիսցիր մինակ որ յօժար կամքով ձեզի չեմ թողուր, և եթէ հայրենիքի փրկութեան զի՞ մը չը բաւէ, զիս ալ պատերազմի դաշտ պիտի դանան, վասն զի հայրենիքի բոցը սիրսս կը

տոչորէ, և հայրենիքի փրկութեան հպմար արիւն թափելու չափ նուիրական բան չկայ մարդկային հաճոյքներուն մէջ:

Վարդ.—(Որչա՛փ քաղցր է հայր ըլլալու հաճոյքն, այնչափ ալ դառն է) . . . Սիրաս ելաւ, չեմ դիմանար. . . երթամ հեռանամ. . . մնաս բարով շուշանիկս: (Կ'երքալ)

ՏԵՍԻԼ Ը.

Նոււանիկ առանձին

—Ասկէ ետքը բնա՛ւ մխիթարութիւն մը չունիմ, յոյսս և ապագաս բոլորովին կործանեցաւ. . . մայրս երբէք տեսած չեմ, հայրս ալ այսօր կորսնցուցի վասակին պատճառաւ, որուն որդւոյն սիրսս նուիրած եմ. . . ա՛հ, պատճառաւ, որուն որդւոյն սիրսս սիրոյ և խղճի մէջ կը տան-պատճառաս մըն է որ կեանքս սիրոյ և խղճի մէջ կը տան-ջուր. . . մելամալձոսութիւն մը կը տիրէ վրաս: Երթամ մենեւակիս մէջ առանձնանամ. . . հոն ողբամ վաղամեռիկ մայրս, ողբամ հայրս և իմ դժբաղդ ճակատագիրս: (Երքալու կ'ըլլալ):



ՏԵՍԻԼ Թ.

Նոյն եւ Գիսակ

Գիսակ.—Օ՛, հո՞ս էք, աղնիւ օրիորդ. . . :

Նոււան.—Շա՛տ տիսուր եմ այսօր:

Գիսակ.—Ի՞նչ է պատճառը:

Նոււան.—Քու հայրդ:

Գիսակ.—Իմ հա՛յրս. . . :

Նոււան.—Այո՛, վասակ, քո՞ւ հայրդ:

Գիսակ.—Զեմ հասկնար, ի՞նչ ըսել կ'ուզէք:

Նոււան.—Դուք չէք վկայեր թէ հայրդ ի՞նչ կերպ գաւանանութիւն կ'ընէ մեր հայրենիքին:

Գիսակ.—Այդ ի՞նչ արգելք կրնայ ըլլալ մեր սիրոյն, որ երկու կողմանէ ալ անկեղծ է:

Շուշան .—Կ'աղաջեմ, Գիսակ, սիրոյ վրայ ա'լ ասկէ վերջ մի խօսիք ինծի հետ, խզնի տագնասիներով պաշարուած եմ, թո'ղ զիս որ իմ բաղդս ողբամ:

Գիսակ .—Զեզի նման անկեղծ սիրս կրող աղջիկ մը կարելի՞ է որ անհաւասարիմ զանուի, չէ՞ք յիշեր որ մահուանէ վերջն ալ զիս սիրել ուլստած էիք, մէկ վայրկեանի մէջ ինչու՞ս դուն քեզի կը հակառակիս . . .

Շուշան .—Ես հաւասարիմ եմ, երբեք մի կասկածիք, ուրիշ մը չպիսի սիրեմ, բայց մեր սիրոյն մէջ անջրակէտ մը կը կ'անդնի, քու ազգասեաց հայրդ իմ սիրս քու սրաէդ կը հեռացունէ . . . հայրենիք մը ունի դաստիարակ ձեր գերդաստանին դէմ, հետեւաբար պաստոյ զդացում կրող աղջիկ մը՝ ազգութեան սէրը չլինար փոխանակել անհաստական սիրոյ հետ . . . մի վշտանաք այս խօսքիս :

Գիսակ .—Զը վշտանամ . . . դուն դաշոյնէ մը աւելի ծանր հարուած տուիր սրախ . . . դուն կասկած կը յայտնես իմ հայրենասիրութեանս վրայ, կը կարծես թէ՝ հօրս փառասիրութեան կը հետեւիմ . . . չ'ատ կը սիսալիք ազնիւ օրիորդ, եթէ զիսնայիք թէ հօրս և մեր գերդաստանին մէջ ի՞նչ տեսակ գժառութիւն ծագած է, եթէ կարող ըլլայիր սրտիս խորը կարգալ, չպիսի տայիր այդ մահացու հարուածը, և անշուշտ այդ վշտիդ տեղ սիրոյ անմեկնելի նշոյլներ սլիտի ճառագայթէին սիրտիդ վրայ զոր անչափ զորովով կը պաշտեմ:

Շուշան .—Կասկած մը չունիմ քու անկեղծութեանդ վրայ, սակայն սրախ մը խորերը կարգալ այդ Աստուծոյ մը գործ է, պարզումիս աղջիկ մը շատ շուտ կը խաբախ, իսկ ողջամիս աղջիկ մը պէտք չէ' շո'ւտ համոզուի, և մարդիկ փոխանակ հարիւրաւոր վիպասանութիւններ կարդալու աւելի լաւ կ'ընեն, եթէ գործքով մէկ ապացոյցը տան իրենց սիրոյն:

Գիսակ .—(Ծունկ չոգելով) միթէ բնութիւնը զիս տանչելու համար քեզի ատեղծեց . . . այս անգութ, տե՛ս որչա՛փ անկեղծ է սէրս որ այս տանջանքիս մէջ իսկ եր-

ջանիկ կը համարեմ կեանքս, խնայէ ինծի, չափաւոր է քու յանդիմանութիւններդ և ըսէք թէ ի՞նչ ապացոյց կուզէք:

Շուշան .—Զեր կեանքք:

Գիսակ .—Լոկ կեանքք . . .

Շուշան .—Բաւական է:

Գիսակ .—Այն արդէն քուկդ է:

Շուշան .—Ահա՛, հայրենիքը վտանգի մէջ, երթանք մէկանդ կամ զայն փրկենք և անոր անկախ զրկին մէջ մեր սէրն իրար խառնենք, և ազատ ապրինք, կամ մեր սրտին արխւններն իրար խառնելով իյնանք անոր փլատակներուն տակ և երկնից մէջ իրար վայելենք . . . այս տեսակ զոհողութիւն մը կընա՞ք ընել . . .

Գիսակ .—Կը խոստանամ պայմանով մը միայն:

Շուշան .—Ի՞նչ պայման:

Գիսակ .—Իմ կուրծքս ըլլայ Վահան քեզ սպառնայող գէնքերուն, ևս միայն մեռնիմ և ես վրայ զոհ կ'ըլլամ եթէ քանի մը կաթիլ արցունք թափեսցուրա թիւակիս վրայ:

Շուշան .—Ո՛չ, մէկանդ մեռնինք, մէկանդ ապրինք. երթանք վտանգը մօտ է:

Գիսակ .—Անկեղծ սրախ մը համար կեանքն ու մահը մած նշանակութիւն ունի . . . երթանք:

ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

STUDY II.

F U N S

(Կանքեղ մը կը պլայայ, բանտապէտր բանտին դրան սիւնին բով պառկած կը բնանայ, բանտին խորէն կերգեն ողբաձալն)

Մեր քաղցր ափունը
 Ընդ վաս զինուր
 Մերկ ՚ի փառաց
 Աւեր անշուր.
 Անդ սիրեմիք
 Զայնեն ՚ի փող
 Ցաւ, վիշտ, հառաջ
 Եւ սիրտ ՚ի դող
 Դիմն Տաճարն,
 Ան լալագին
 Ցերկնից մաղթել
 ՚ի լոյս վերջին:

Ժաման սասանին
 Ոսոխ նիզակ.
 Նախմիրա զործէ
 Ընդ աւերակ
 Հայոց Աստուած
 Լե՛ր պահապան.
 Փրկի ահա ,
 Եւ հայաստան.
 ՚ի խոր բանտէս քաղց սլանան
 հառաչք. Ընկա՞լ տէր փըր-
 կութեան:

STUHL F-

Միհրներսէն և Վասակ (բանտապէս 'ի բուն)

Միթքերսէն .— (մտնելով.) Վասակ, կը լսի՞ս այս հառաջալից մաղթանքներն որ մուժի բանալին կամարներուն արձագանք կուտան, հայրենակիցներուդ յուսահասութեան արդիսնքներն են :

Վասակ. — Միհրներսեն, մի՛ նախատեր զիս, չե՛մ
ես հայ... այն օրը՝ որ Պարսկական կրօնքն ընդունեցի
հայութիւնն ու անոր կրօնքն ալ միանգամ ատեցի,
եւ չե՛մ, չեմ ուղեր որ ասկէ ետքը այդ անիծեալ ա-
նունը ինձի առն :

Միհրներսէն .— (Հայ մը հայութիւնը կը նպալէ) Այդ-
անունը ինչո՞ւ այդքան պիղծ է :

Վասակը .— Հայը բնաւ արժանիք չի ճանչնար, միշտ
յամառ, միշտ ապերախտ է, եթէ Պարսկաստան իր քա-
ջերուն ճակատը դափնիներով ու մրտենիներով կը դար-
դարէ՝ Հայաստանի վեհապետնին մըցանակը մինչև զերեղ-
ման նախատինքներն են . ահա՞ , ասոր համար ազգութիւնն
եւ կրօնքս մերժեցի՞ : (Մինչև նպատակիս հասնիմ) :

Միերներսէն .— Հայտատանցիները յամառ են . ինչպէս դուք ալ հիմա վկայեցիք , ուրեմն չպիսի կրնաք համոզել , հետևաբար , արքայական հրամանը պիտի անարդուի :

Վասակ .— Հայութիւնը ուրանալու համար :

Վասակ! — Այդ ինուիրը շա՞տ ծանրէ, Մեծ խորա-
ռութիւն կուգէ, հայերու սրբին մէջ կրօնքն ու Աղ-
թիւնը անանկ զարմանալի կապ մ'ունին որ ոչ վսանի,

Այս աքսոր և ոչ իսկ սուրբն ու մարզ կրտսեա լորդացիւն .
Մինիններսէն . - (Տեսնենք ի՞նչ խրառ պիտի տոյց)
Ուրեմն գիւրին միջոց մը
Վասակ . - Բայտ իս բավանդակ հայաստան նուածե-
լու համար , այս բանսարիկեալները անկոփի երկիրներ աք-

Վասակ.—Տեսա՞ր վարդանը, տեսա՞ր անոր լինկեր-
ները, անոնք հայտառանի ողիներն են . . . երբ անոնց շլ՛-
թաները քաղաքաւին ո՞չ միայն հայտառանի կենդանի շուն-
ջերը կընան զրգուել այլև գերեզման իջած հայերուն ան-
դամ հայրենասիրութեան բոց կը շնչին Պարսկաստանի
պարիսպները մոխիր դարձնելու :



Վասակ . — Կը սիսալիք . . . հայերը ասկերախտ են իրենց համար , հայ մը չ'ուզէր՝ հայ մը բարձրանայ , հայ մը չուզեր՝ հայու մը հաւաղանդ լլլա՛լ , հայ մը միշտ չարիք կը հասցնէ երախտառոր հայուն . . . այս այսպէս է : Իսկ հայուն օտարասիրական զգացումը օրինակ չ'ունի , օտարին սիրոյն համար ամէն բանի կը զիջանի , ամէն ստորին և անարդ միջոցներու կը դիմէ , իր գէնքը հայրենակցին կը դարձնէ . բնութիւնը արհամարելով իր գաւկին գիտակին վրայ ալ կը կոխկառէ և ի՞ հարկին իր կեանքն իսկ մահուան առջեւ կը նետէ . բաւական է որ իւրաքանչիւր քայլափոխը ի զնաւ հայրենակցին և ի նպաստ օտարին առած ըլլայ :

Միհրներսին . (Այդ վաստ հայերէն մէկն ալ ինքն է) .
Ուրեմն ապահով ըլլանք :

Վասակ . — Անշո՛ւշտ . . .

Միհրներսին . — Օ՛ , բանտապետը կը քնանայ . . . ձայնելու է . . . բանտապետ . . . բանտապետ . . .

ՏԵՍԻԼ Գ.

Նոյնի եւ բանտապէս . (Արքնալով)

Բանտապէս . — (Միհրներսին է) Տէ՛ր իմ . (Գիշերագէմ մահէ կարծեցի) :

Միհրներսին . — Մինչեւ հիմա կը քնանա՞ն :

Բանտապէս . — Կէս զիշերը զնոր նոր զարկաւ (ի՞նչ սարսափելի մարդ) :

Միհրներսին . — Բանտին դուռները ամուր զոյա՞ծ էք :

Բանտապէս . — (Ի՞նչ ըսեմ) Այո՛ , այո :

Միհրներսին . — Օրը ո՞քափ հաց կը տրուի ասոնց :

Բանտապէս . — (Երբեմն սուտ խօսելու է) Իւրաքանչիւրին մէյմէկ փոքրիկ նկանակ :

Վասակ . — (Անօթի մեռնելու ևն որ Հայաստանի թաղը ժառանգիմ) :

Միհրներսին . — Զո՞ւր . . .


Բանտապէս . — Մէյմէկ փոքրիկ բաժակ (Տեսնենք ա՛լ ի՞նչ պիտի հարցնէ) :

Միհրներսին . — Հիմա պիտի երթառ զանոնք շլթայկապ հոս բերելու , ըսես իրենց որ մեծ հաղարապետը եկած է ձեղի փրկելու , եթէ իրեն առաջարկութիւնը ընդունիք . . . շուտ ըրէք :

Բանտապէս . — Շատ աղէկ : (Վաստ մը բարիք ընել կուզէ , այս ալ զարմանք) (Երթալու կ'ըլլայ) :

Վասակ . — Բայց կեցիր . . . իմ զալս անոնցմէ ծածկէ :

Բանտապէս . — Գլխուս վրայ (Հայ մը Պարսիկ սիրո կը , կը ո՛վ Աստուծ (Կիրթայ) :



ՏԵՍԻԼ Գ.

Միհրներսին եւ Վասակ

Միհրներսին . — (Մօրուքին ջուր մալ տամ) Ա՛հ , սիրեցեալլ իմ Վասակ , արդեռք պիտի յաջողինք աս պարագային փառաւոր յաղթանակ մը ձեռք բերելու :

Վասակ . — Անշո՛ւշտ եղէք . . . եթէ ձեր առաջարկութեան համոզուին իրենց պատույն վրայ խօսք տապով , շատ աղէկ . իսկ եթէ իրենց սովորական յամառութեան մէջ աղէկ . իսկ եթէ իրենց սովորական յամառութեան մէջ աղէկ մական առելի ծանրայնելու է իրենց շլթաները և անկէ վերջ անմիջապէս Հայաստան զրաւելու է . . . Միհրներսին , ձեռքիս տակ զանուած զօրաբաժիններուն այնքան տասելի ըրած եմ իրենց ազգութիւնը , որ եթէ Հայոց և Պարսից պատերազմը հրատարակուի , Հայը հայուն կուրծքը պիտի միան միան կարծիքն էր նիզակը , Հայը Հայուն արիւնը պիտի իմէ , վերմիսէ իր նիզակը , Հայը Հայուն պիտի իմէ , վերմիսէ Հայուն նորհիւ Հայաստան իշխանութեամբ ու կրօնքով նոր Պարսկաստան մը պիտի դառնայ :

Միհրներսին . — (Արդէն մեր կարծիքն ալ այդ է) Այս առանձն Հայաստան ոսքիդ առջեւ խնարհած և անոր թաղը զլուխդ պիտի տեսնես . . . հաւասար , որ քու ծառայութիւնը

Ներդ վարձասորելու համար քեզի Հայոց թագաւոր պըստ կել պիտի տամ: (Մէկն ալ պէտք է որ զիս թագաւոր պսովէ:)

Վասակ: — (Իմ արժանաւորութեամբս դայն ձեռք պիտի ձգեմ):

Միհրներսեն: — Ոտքերու ձայներ կը լսեմ. . . Կարծեմ կուգան. դուք հեռացէք:

Վասակ: — (Այս յիմարն ալ կը կարծէ թէ իրենց օղտին համար Ազգս կը մասնեմ, չը զիտէր որ փառքի համար այս զոհողութիւնները կընեմ): (Լ'երթայ)

Միհրներսեն: — Մարդ մը քանի որ իր ազգը կատէ, ի՞նչ ասուինանի կրնայ հաւատարիմ գտնուիլ Պարսկաստանի. . . չը զիտէր որ Պարսկաստանի յաղթական համբէսին առաջին զոհը ի՞նք պիտի ըլլայ. . . :

ՏԵՍԻԼԵ-

Միհրներսեն, Բանտապէս, Վարդան եւ Ռուփեներ
(Շոբայակապ)

Վարդան: — (Իրեններուն) Առանձինն է:

Միհրներսեն: — Վարդան, արքայից արքային կողմանէ առաջարկութիւն մ'ունիմ:

Վարդան: — Յայտնեցէք, Միհրներսեն: (տեսնենք ի՞նչ պիտի ըլլայ):

Միհրներսեն: — Զեր փրկութեամնը համար է:

Արտակ: — (Դարձեալ խարդաւանք):

Միհրներսեն: — Պարսից խիստ Աստուածը դայրացած՝ մողերու բերնով պատզամ կուտայ Յաղիւրափին՝ Քըրիստոնէութիւնը բնաջինջ ընելու, իսկ եթէ դուք զայն խոտովանիք, և զոհերով անոր դայրոյթը իջեցնէք, անմիջապէս կը քակուին ձեր շղթաները ու խաղաղութեամբ կրնաք համբուրել հայրենի պարիսպները:

Արտակ: — Ի՞նչ կը նշանակէ խղճի վրայ այսքան բռնութիւն:

Վարդան: — Պարզապէս ըսէք թէ՝ կ'ուզենք ձեր շղթաները քակել, ընդանուր Հայաստան շղթայի զարնելու համար . . . Եթէ քու Աստուածդ ու թագաւորդ այդքան ազնութ են զէթ դու զիթան կըլլայիր մեր վրայ եթէ մահ կ'առաջարկէիր, որ անմահութեան սկիզբն է:

Միհրներսեն: — (Վախնամ չպիտի համոզուին) Սյդ ձեր կարծիքն է:

Արշաւիր: — Յայտնի ձևարտութիւնն մը՝ ի՞նչպէս կրնայ կարծիք ըլլալ . . . խղճի ազատութիւնն է որ մարդուս հայրենիքը իրեն սիրելի կընծայէ, քանի որ Յաղկերս բնութեան պարգևւած ազատութիւնը կուղէ մեզմէ կարսել, քանի որ խղճի վրայ բռնանալով մեր կամքին հակառակ Աստուած մը կուզէ մեզի պաշտել տալու, ուրիշ բան ըսել չէ բայց եթէ մեր ազգութիւնը կործանել և Հայաստան երկրորդ Պարսկաստան մը ընել:

Բանտապէս: — (Պարսից ճիշդ նպատակը ըստա:)

Միհրներսեն: — Կրօնք Ազգութիւն տարբեր բաներ են: Արշաւիր: — Այս, սակայն անոնց մէջ անանկ հըրացալի կապ մը կայ որ մէկը խորսակուելուն միւսն ալ ի՞նքին կը խորսակուի:

Միհրներսեն: — (Ձևարտութեան պիտի կրնա՞նք յաղթել) Յաղիւրափի միտքէն անզամ ատանկ վասն ըրպատակ մը չանցնիր. ատոնք հինյած կամկացներ են: Յաղիւրափի ծառայութիւնը մը պիտի ընէ՝ երկնային անյուղի պատգամը տեղը տանելով.

Վարդան: — Մի՛ թշնամնէը Աստուածդ . . . փառասիրութիւնը տուած է այդ պատգամը, Յաղիւրափ ալ կ'ուզեղէ զլուխ հանել մեր կրօնքը իրեն նիւթ ըրած . . . : Միայն բանութիւնը, միայն բանութիւնը կոտորացներ կ'ընէ, բոշխարհս աւելակ, անսպաս մը կ'ուզէ դարձել և բովանդակ տիեզերքը մարդկանէն արևան տեսարանի մը փուլանդակ տիեզերքը մարդկանէն արևան տեսարանի մը փուլանդակ տիեզերքը մարդկանէն անյագ տենչն է բու Աստուած չէ' . . . մինակ մարդկային անյագ տենչն է բու Վարդիքներուն հեղինակը, իսկ եթէ Զեր Աստուածը ի՞այդ չարիքներուն հեղինակը,

բառ խղճի աղաստութեան թշնամի է և կ'ուզէ մարդկացին արեան մէջ զուարձանալ, ատանկ բոհնաւոր՝ ատանկ արիւնուուշտ Աստուած մը չե՛մ պաշտեր և չե՛մ ուզեր անոր հետ պատոմութենէն դատապարտուիլ ապագային առջեւ . . . մարդու մեռնելու է իր պատիւն ու անունը անմահացնելու համար:

Բանապետ. — (Առաքինի անձի մը խօսքեր):

Միհրներսէն. — (Մինչեւ վերջը քաղցրութեամբ պիտի վարուիմ): Այս առաջարկութեան մէջ պատույ նախառինք մը չըկայ . . . Յաղկերտ ո՛չ խղճի վրայ կը բռնանայ, ոչ ալ մէկու մը ազատութեան կը վնասէ. այլ կ'ուզէ իր աստուծոյն իրաւունքը պաշտպանել . . . ասով ո՛չ Աստուած մը անդութ կ'ըլլայ: ո՛չ ալ Յաղկերտ բռնաւոր . . . :

Վարդան. — Աստիկայ, փաստակին փաստն է . . . այդ տեսակ դաս մը միշտ աշխարհի կրտսան միասպետները, ուրինք իրենց նախառակին հասնելու համար մոլեսանդ իրաւունք մը կ'առեղծեն, ամէն վատթար միջոց ձեռք կառնեն. խիզճ չեն ըներ իրենց նմանները մեռցնելու. մինչեւ խակ կը յանդդնին իրենց գահին պատաւանդանը մարդկացին արեամբ ներփելու:

Միհրներսէն. — Այդպէս չէ, խիզճ վկայ կը կրչեմ որ Յաղկերտ ատանկ չար դիստարութիւն մը չունի:

Արտակ. — Ունի՞ս խիզճ . . . մակ'ր անոր ատեանը, որ քնութիւնը մարդուս սրտին մէջ դրած է, մակ'ր այդ անտառ դաստաւորին ատեանը, ներկայացուր անոր այդ առաջարկութիւնը, ան'ս, կարգարացնէ . . . :

Վարդան. — Վիճականնելու հարկ չըկայ, . . . մինչեւ վերջը չէ՝ պիտի ընենք, այդ պատուաւոր առաջարկութիւն չէ:

Միհրներսէն. — Դուք ի՞նչ կ'ըսէք:

Արտակ. — Մենք ալ նոյնպէս:

Բանապետ. — (Մեկուսի կապեալներուն) Այս' ըսէք, մինչեւ որ պատիք:

Միհրներսէն. — Ճշմարիսը խօսելով՝ դուք մեր պատիւն ու փառքը չեք ճանչնար:

Վարդան. — Մենք Վասակ չ'ենք, մենք ճշմարիս

հայու զաւակներ ենք, մեր պատիւն ու փառքը Հայաստանի պարզութեան մէջ է և մեր քաջերուն գերեզմանները մեր նուիրական բաղիններն են, մենք անս ո ապահովութեան համար միայն պիտի ապրինք, խակ եթէ անողոք ճակատագիրը մահ կ'ապառնայ, սիրով պիտի մեռնինք անոնց փիկութեան համար:

Միհրներսէն. — Վարդակ'ն, ձեր և Հայաստանի փրկութիւնը կամ կորուսը ուղղակի կամքէդ կախում ունի . . . կ'ուզմա փրկութիւն, հնազանդէ՛, ասա թէ ո՛չ Յաղկերտ որոշած է այդպէս շղթայակապ՝ սոսկական վաստաշուք զինուուրի մը նման՝ քեզի անկուս երկիրներ վարել, անկէ ետքը իր զէնքերը Հայաստանի պարիսպներուն պիտի դարձնէ, ձեր սիրելիները՝ Ձեր զաւակներ սոնակոսի պիտի պարձնէ, այս սիրելիները՝ Ձեր զաւակներ սոնոնց զիակները պիտի ծածկեն. . . յամասութիւնն շարժաւիթ պիտի ըլլայ այդ ոճիրներուն:

Վարդան. — Այս շլթանները, որ մեզի նախատելու համար ձեռուընուս կախած էք, այս շլթաններն անմեղներու համար մրցանակները են, խոկ առաքինի քաջի մը համար փառք . . . անոնց վրայ նախ թող մեզի մեռնցնէ, բայց թող զինայ որ այս արիւնոս շլթաններն այն տակն հայաստանի արգաղիր նուերները պիտի ըլլան . . . խակ Հայաստանի ալ պիտի սոսկանայ եղեք, թո՛ղ անոր արեան մէջ իր փառամիրութիւնը կտայնէ, թո՛ղ անոր անմեղ զիակներուն վրայ կոխկասէ, թո՛ղ անոնց վրայ հայրենի պարիսպները փլցնէ. պլծուելէ առելի աշէկ և կործանի հայաստան, անոր մոտիքները կաշով են նոր և անմահ հայութիւն մը ծնիլ:

Աւագիր. — Յիշէ՛ Յաղկերտն որ քայլ մ'ունի զերեզմանին մէջ իջնելու, զեթ այս կարճ միջոցին մէջ ճանչնայ իր պատասխանառութեան ծանրութիւնը:

Միհրներսէն. — (Ամէն համոզում անօգուտ է) Քիչ մը միջոց ալ Զեզի կը շնորհեմ. դարձէք ձեր բանար, հոն միջոց ալ Զեզի կը կոխեցէ՛ք, թերեւս մեր զիթութեանը զիմել որոշէք: (Կ'երթան):


ՏԵՍԻԼ Զ.

Միհրներսէն եւ Բանտապէս

Միհրներսէն .— Բանտապէ՛տ :
 Բանտապէս .— Տէ՛ր իմ :
 Միհրներսէն .— Հրաման մ՛ունիմ քեզի :
 Բանտապէս .— Պարասաս եմ ,
 Միհրներսէն .— Մարդասիրական պարտք մը պիտի
 կասարէք :

Բանտապէս .— Սիրով կ'ընդունիմ , (Չարերն ալ
 մարդասիրական բառը կը գործածեն) :


Միհրներսէն :— Յուսահասութիւնն է որ մահը կը
 քաղցրացնէ այս թշուառներուն , բայց աղիքներուս մէջ
 դութս գիւրազզած է , չուզեր ասոնց կորուսոր , ուստի
 արքայից արքային ահեղ հրամանը զեռ չը գործադրուած՝
 աշխատոէ , քու ծերութեանդ փառքին համար ըլլայ , գա-
 նոնք իրենց յամառ կարծիքն յեղաշրջել . . . ահա քեզ ա-
 նոնց հետ առանձին կը թողում : (Կ'երթայ)



ՏԵՍԻԼ Է.

Բանտապէս առանձին

(Ետեւէն նայելով) Գնա՛ց . . . ի՞նչ զարմանք , միա-
 պետներն ալ կատեն անզթութիւնը և բանութիւն
 ընել կը սիրեն . թէւ իրենք ալ զիսեն թէ բանաւոր ը-
 սել՝ անզութ ըսել է . . . ժամանակը կանցնի , զուցէ այս
 քաջերուն դժբաղաւութիւն մը հասնի . . . բարեսիրա իշխան
 մը խօստայած էր զալ համոզելու . բայց զեռ չերեցաւ . .
 երթամ . երանի թէ ես համոզեմ . . . որչափ քաջը է ինձի
 ձեռքովս ասոնց շղթաները քակել :



ՏԵՍԻԼ Ը.

Բանտապէս եւ ծպտեալ մը

Ծպտեալ .— (Ետեւէն) , Կեցի՛ր ծերունի՛ :
 Բանտ .— Ո՞վ պիտի ըլլայ ասիկա :
 Ծպտ .— (Դէմքը բանալով) Ես եմ :
 Բանտ .— Ես ալ քեզի կ'ապասէի , ուրեմն կ'անչեմ
 շղթայակապները :
 Ծպտ .— Կանչեցէ՛ք , բայց հսու թշնամի ականջներ
 մտիկ չընեն :
 Բնիսպ .— Այդ մասին կոսկած մի ընէք (Կ'երթայ) :



ՏԵՍԻԼ Թ.

Ծպտեալ առանձին

— Ահ , որչափ որ ժողովուրդները կատարեալ կըր-
 թութիւն չեն առած , որչափ որ կատարեալ չեն լուսո-
 ւորուած , երբէք չեն կրնար իմանալ թէ իրենց հայ-
 րենիքին շահն ու վեասը միօրինակ ամէնուն կը վերա-
 բերի , թէ ամէնքն ալ հաւասար իրաւունք ունին անոր-
 ընքին ու ծառան ըլլալու . . . ժողովուրդին տղիսու-
 տէրն ու ծառան ըլլալու . . . ժողովուրդին տղիսու-
 տէրն է մի միայն պատճառ , որ թագաւոր մը կամ
 թիւնն է մի միայն պատճառ , որ թագաւոր մը կամ
 միապետ մը զերմարդկային շէակ մը կը հանջնան , և
 միապետ մը զերմարդկային շէակ մը կը հանջնան , և
 կուրօրէն իրենց հայրենիքին բաղդն ոյշ մողական բա-
 սկրուն ստքը կը ձկեն , հարկաւ , անկէ վերջ այս զերա-
 պոյն հանչցուած իշխաններն իրենց փառքին ու նպաստ-
 կին հասնելու համար , ներքինները միշտ կուրութեան
 կին հասնելու համար , որչափները միշտ կը վնասեն . . .
 մէջ կը պահեն , արտաքիններուն ալ միշտ կը վնասեն . . .
 Մարդկային այս խաւարային տղիսութիւնը արդիօք որ-
 պարդկային շղթաները առակաւին պիտի ներէ , որ պետական զա-
 տղանները անմեղներու գլուխ փշեն :



STUTL d.

Նոյն բանտապես եւ ռդրայակապները

ԲԱՏ.— ԵԿԵՇ.Ք ՊԱՐԱԼՈՒՆԵՐՄ, ԵԿԵՇ.Ք :

Ծպէլ.— (Ո՞վ կոյր աշխարհ, առաքինի դիւցազունները շղթաներով կը վարձատրես . . .) Վարդա՛ն, սիրեցեալդ իմ Վարդան թող համբուլեմ այդ շղթաներդ:

Վարդ.— Ա՞հ, բարեկամս, հայրենամէրի թեւէն
կախուած ժանգոս շղթաները՝ զուռղ աշխարհակալի մը
բիւնոտ դափնիներէն և յաղթական մրտենիներէն տեւել
աղէկ կրնաց զարդարել իր հայրինիքին ճակատը . . . եթէ
աշխարհ, . իր զիւցազուները մէջ մէկ շքեղ արա-
ծաններով կը փառաւորէ, ես այն ժամանակ կ'անմահա-
նամ, երբ լարձեկա՛մ մը մարդկասիրական վերջին պարտք
մը կառարեկու համար՝ այս շղթաներս զերեզմանիս վրաց
ձղէ . . . բարեկամ, այս անսովոր երկրին մէջ՝ քեզմէ զատ
հաւասարիմ մը չունիմ ու քիչ ժամանակի մէջ թերեւս
Պարսկական խիստ բանութեան զոհ ըլլանք, գէթ զո՞ւն
կատարէ այս տիսուր ժառայութիւնը . . .

Ծագեալ. — Վարդան, քաջ մը պէտք չէ յուսահատիք :
Վարդան. — Քաջի մը յուսահատութիւնը այն ատեն
աններելի է՝ երբ օտար վէնքի մը իր թիկոնքը կը դար
ձնէ, այլ մեր յուսահատութիւնը արդար է. հայ մը մեզի
այս դժբախտութեան մէջ ձկեց. վասակ մեզի մատնեց,
խարսեցանք անոր կրած հայ արիւնէն, չէինք զիսեր
որ կոյր վասաքը անոր սրտին հայութեան արիւն
նը քամած՝ երամիներուն մէջ Պարսիկ արիւն իցու-
ցած էր... հաւատա՛, երբէ՛ք չեմ վշտանար ընտանի խա-
րէութեան մը գոհ ըլլալուս. այլ միայն անոր համար կը
ցաւիմ, որ վասակ անբողջ ազգն ալ պիտի մատնէ և տա-
կալին հայաստան չպիտի կրնայ ճանչնալ իր թշնամին...
ահն, բարեկամն, եթէ մենք չկրնանք ուրիշ անդամ հայ-
րենի ափերուն լոյսը վայելել, գէթ Հայաստանին դուն
յայսնէ իրեն թշնամին. իր աւերակներուն տակէն ելած
հասածանքները Վասակի հլիսւն վրայ թափին, և նզովք
դառնան :

ԾպՏեալ .— Զեր աղասոութիւնը , ամէն վատանզնեռոու առաջը կրնայ առնել :

Վարդան .— Պարսկաստանէ՞ն յուսամ այդ ազատու-

թիւնը: Տարածության տարածության

Ծպտեալ. — Բանստապես մեղ մտիկ ընող չըլլայ:

Բանվ.— Ես դուռը կը պահպահեմ (կ'երթայ)։

Ծագ. — Վարդան, Վարդի իշխան մը ըլլալս կու
աղեկ զիտես, հայրենիքիս մատուցած հաւատաբինմ ծա-
ռայութիւններուս ալ քաջ տեղեակ ես, բայց ապէրախա-
գոնուեցաւ հայրենիքս, Ձեզի նման զիս ալ մասնեց:
Պարսիկն ալ մահ կ'սպառնար եթէ մողական կրօնքը
չընդունէի, այս պատճառուս պարսիկ եղած եմ. և ար-
քային խորհրդականներէն մէկն ըլլալու պատիւը ունիմ...
դժբախտութիւն մըն է ինծի համար այս վիճակը
սիրսս միշտ կ'առէ պարսից քաղաքականութիւնը. մա-
նաւանդ կրօնքը, անոր համար առանց բաղրէն ընկըս-
ելու միշտ յարմար առիթին կ'սպառնիմ... հաստա-
տուն յոյսն ալ արդիւնք մըն է: Ուստի եթէ ցանկա-
ցող էք ազառութեան, և եթէ կը սիրէք ձեր հայրենիքը
զիս ձեզի օրինակ առէք, կատարեցէք առ երեսս անոր չար-
կամքը՝ մինչեւ ձեր կեանքն ու Հայաստանը փրկէք

Վարդան .— Այդ ալ հաւասարմութ

Արտակ :— Վասութիւն մըն է այդ :

Ծայ. — Վասի մը հաւատարրոն կառաւէւ և
թիւն է... ձեզի համար պատրաստուած մօսալուս վր
տանզը կ'ատխակ զիս այսաէս իւիստ ըարեկամութեամ
վարուելու... մէկ քանի վայրեկեան միայն ձերին կեանք
կերաշւաստորէ, այնուենտես ձեղի հետ Հայաստանն ալ ի
վերջին շունջը պիտի փչէ... դուք հիմա ասանկ անարկո
վասնի մաջև անստարբ՞ը պիտի կինաք, սակայն այ
ստեն եթէ աշխարհ Վասակը հայրենիքի մասնիչ հոչակ
գձեց ալ Հայաստանի դահիճները պիտի անուանէ:

Բնակ :— (Ալմարակով) Դահճապետը կը դայ

Գարդ. — Ուրեմն այսպէս ընկնք:

Արտական է որ խիղճերնիս հանդարտ ըլլայ և
ծայ. — Այդ վերջին որոշումին վրայ հաստատ կի-
ցէ՛ք: (Կ'երթայ):

ՏԵՍԻԼ ԺԱ.

Նոյնի, դահնապես, Դահիններ (Վասակ զաղսեի կը դիսէ)

Դահնապետ. — Ստիպուած եմ Արքայից Արքային

վերջին որոշումը գործադրել:

Վարդ. — Միրով կ'ընդունինք Արքային հրամանը:

Արշակ. — Մենք միւս հաւատարիմ զանուած ենք:

Դահն. — Կամ Արքակին պիտի խոնարհիք, կամ այս երկաթներուն:

Վարդ. — (Ներէ մեզի Աստուած իմ) Միայն Արքա-

կին պիտի խոնարհինք:

Դահն. — Ուրեմն ազատ էք... Քաղէ՛ ասոնց շղթա-

ները (Կը քակէ):

Բանապ. — (Խիղճս հանդարտեցաւ): (Կ'երթան)

ՏԵՍԻԼ ԺԲ-

Վասակ (Տեսարան ելնելով)

— Համոզուեցան վերջապէս... յաղթութիւնը իմս է... Պարսիկը զիս կ'առէ հայ մը ըլլալուս համար, հայը զիս կը նորովէ Պարսիկ ըլլալուս համար, բայց ես ոչ Հայ եմ ոչ ալ Պարսիկ, երկուքն ալ միօրինակ կ'առեմ, ես սոսկ փառասէր մըն եմ... փառքի մը համար միայն բո-
լոր դիւնագիտական հնարք բանեցուցի. մինչեւ շատ երկիրներ իրար զարկի... վերջապէս ահա կը յաջողիմ մօմ օրերս Հայաստանի գահը բարձրանալ... իսկ եթէ Հայաստան տակաւին տկար դիմագրութեան փորձ մը ընել ուզէ, այս արխւնի պաշտօնն ալ քեզի կը յանձնեմ, (առ-
ը մէջքէն քաշելով), անբաժան ընկերու, ասանկ վասն-
գասոր վայրկեաններու համար զքեզ մէջքս կը կրեմ...
Ուրեմն զօրացուր բարձրեներս, որ վասքերուս համար կարող ըլլամ մահուան վասնդները արհամարհել:

ՎԱՐԱԳՈՅՔ ԿԸ ԳՈՅՑՈՒԻ

ԱՐԱՐՈՒԻ ԱԾ Գ.

ՏԵՍԻԼ Ա.

(Տեսարանը կը ներկայացնէ Վասակի շրեղ եւ զարդարուն ապա-
րանը. ծառաները մեծ փութով փառաւոր սեղան մը կը պատ-
րաստեն)

Վասակ եւ իր ծառան

Վասակ. — Տե՛ս, իմ հաւատարիմս, քիչ առենէ
որ իմ ծառայութեանս մէջ կը զանուիս, սակայն փորձերը
ամէն կերպով Տիրասիրութեանդ վրայ զիս ապահով ըրած
են, անոր համար այս խնջոյքիս զարդնիքը քեզի պիտի
բայցարեմ, այն ասեն աղէկ կը համոզուիս, թէ բաղդն
Արշակունի թազը գիրկու կը նետէ, և հետեւաբար, գուն
ալ պիտի երջանկանա, բաւական է որ հաւատարիմու-
թեանդ արաստ չը բերես:

Ծառալ. — (Հաւատարիմութիւնը տար զբանը պահ-
ուած է) Տէ՛ր իշխան, պատույս վրայ կը խօստանամ
մինչեւ գերեզման հաւատարիմ ծառայելու: (Տեսնենք
ի՞նչ է նպաստակը)

Վասակ. — Մարդո՛ գոյութիւն չունեցող յաւիտենա-
կանութեան մը համար, պէտք չէ կասր կասր լլայ, այլ
փառքի մը, միայն փառքի մը համար իր կեանքը սուղ
ծախմլու է, զայն ձեռք բերելու համար, ամէն տեսակ
զիմանկ փախելու է, ամէն սրաբ նետ խօսկու է, ամմնուն
սիրով ինք կրելու է, մարդոց մէջ ծագած զժառութիւն-
ներէն օգուտ քաշելու է միշտ շողոքորդելով... ահա
կեանքիս օրերը մանկութեանէս ի վեր ասանկ զեղեցիկ
նպաստակի մը նուիրեցի, ամենուն թէ ապրութեան թէ
կրօնքին անձս նուիրել կեզծեցի. թէ և սիրոս ամենքն
ալ միօրինակ կատէ, ամենուն նետ բարեկամ ձեւացայ,
մինչեւ որ ամենքն ալ իրարու թշնամի ըրի. դ խու՛ս...
քանի ասրիէ ի վեր շատ աշխարհներու մէջ ներքին ար-
քանի ասրիմ կը յար շատ արեան հեղեղներ կելնեն
կիջնեն... եղբայր եղբօր դիսկը կը կոխկուտէ այս ա-
մէնը իմ ծածուկ քաղաքագիտութեանս արգասիքներն

են . . . ահա այն վաղած արիւներուն , այն աւերակներուն մէջէն հասածանքներ , նզովքներ , մինչեւ իսկ տկար սպասնալիքներ կարձակուին , կիյնան բաղդիս վրայ ու կը խորսուին :

Ծառայ . — (Կեցեր իր ամշարշտութիւններուն վրայ կը պարծենայ) Ներեցէք համարձակութեանս . . . աշխարհներու այդ վասներէն ուղղակի Պարսկաստան շահեցաւ . . . քիչ տանէն լուր Հայաստանը ալ պիտի մարսէ և միթէ յայտնի սպասոյց չէ որ Հայաստան նուիրական Տաճարները՝ մողերու ձեռքով ատրուշաններու փոխուեցան :

Վասակ . — Զէ' , կը խարսուիք . իրաւ , Յաղիերոփին վերջին նապատակը այդ է , այս պատճառու Հայաստան մոշգերով լեցուց , սակայն չէք զիտեր թէ՝ խնդրոյն մէջ ի՞նչ դաշտոնիք կայ : Չար իշխանները գործունեայ մարդիկը կատան միանդամայն կը սիրեն , այս տեսութեամբ Յաղիերու դիս ալ առերես մեծարելով իմ աղջեցութիւնս գործիք ըրա՞յ է իր նապատակին համնելու : Ես կանխաւ զիտէի այդ զիտաւորութիւնը , անոր համար պարսից կէս ոյժը Հայաստանի գօրութեան առջեւ պիտի սպառի , այսունեաւ բաւական է ձեռքիս տակ գոնուած գօրութիւնս զիս Հայաստանի թաղաղիրը ճանչցնելու , իսկ եթէ Յաղիերու տակաւին տկար փորձ մը ընել ուզէ , Պարսկաստանի դուռներն ալ բաղդիս առջեւ պիտի բացուին . . . ճանչցի՛ր զիս որ մահն ալ ինձմէ կը սոսկայ :

Ծառայ . — Քա՞նի որ Հայաստան մեծ մասամբ ընդունեց մողական կրօնքը , նոր պատերազմի մը յոյս չերեկիր :

Վասակ . — Կը սիսալիս . . . կը ճանչնա՞ս Վարդանը , անիկա յանդուզն հայրենաւէր մըն է , անոր յամառ կամքը երբէք չը խոնարիր օտար առողջոյ մը առջեւ , պիտի ընտրէ անշուշտ իրեններովը հայրենիքի վլատակներուն տակ թաղուիլ՝ քան թէ թողուլ իր հայրենակիցներուն , որ ուրիշ Աստուած մը պաշտեն . . . դուն մի նայի՛ր որ շատեր սկսած են մողերու քով դաստիարակուիլ , անոնք ե՛ս համոզած եմ :

Ծառայ . — (Ծաղրելու կարգը եկաւ) Իշխան , կը գարմանամ թէ ի՞նչպէս համոզած էք այդ անհամար բազմութիւնը , երկնային համհար մը միայն կրնայ ատանկ հրաշք մի գործել :

Վասակ . — Այդ հրաշքը գործողը ոչ երկնային հանձար է ո՛չ ալ աշխարհային . . . եկո՛ւր որ քեզի ցոյց տամ . (բաժակ մը առնելով) ահա ասիկա է այդ հրաշքը գործողը . . . կը տեսնե՞ս այս բաժակը , ասոր մէջ անանկ հրաշապուրիչ զօրութիւն մը կայ , որ ուղեղին վրայ իր արապատրութիւնը ընկլուն՝ մարզս կը կորսնցնէ իր աղնը-ւութիւնը՝ իր բանավարութիւնը , կը դառնայ անրան ապուշ մը , անկէ ետքը տուր ձեռքը դաշոյն մը , անմիջապէս իր հօրն ու մօրը սիրտը կը ծակէ . . . ահա այս նըսպատակով կը պատրաստուի այս ճաշը . . . (ոսքի ձայն) կործել կուղան :

Սպասաւոր . — Մէկը Զեզի կսպասէ դուրսը :

Վասակ . — Ո՞վ է :

Սպասաւոր . — Ծպահաւ մը :

Վասակ . — Հարկաւ ծանօթ լլլալու է , երթամուրեմն . . . հրաւիրեալները , ներքնամենեակն են , ճաշի հրաւիրէ (ապաստորը կ'երթայ) դու ալ մնր կողմանէ պէտք եղած ընդունելութիւնը ըրէ , պատուով և քաղցրութեամբ վարուէ հաւերնին մինչեւ գործերնիս յաջողութեամբ զլուխ հանհնք : (Կերթայ)

ՏԵՍԻԼ Բ-

Ծառայն առանձին

— Կո՛յր փառասիրութիւն . . . մինչեւ ո՛ւր կը յանդուզնեցնէ մարդկային բնութիւնը . . . բոլոր փափուկ ըզգացումները կըմարէ մարդուս սրտին մէջ , խաճին մէջ կը զոյց գթոյ դուռները . զաղտնի զօրութիւն մը կը պղծէ արխնը , որ ատէ իր ազգն ու Հայրենիքը , վերջապէս անանկ կը ցնորեցնէ մարզը որ իր նմաններուն մինչեւ

իսկ արենակիցներուն կողը կը պատռէ կարծելով թէ իր յուսացած փառքը մարդկային երակներուն մէջ ծածկուածէ . . . ա՞հ, ե՞րբ պիտի լուսաւորուի լնկիրական աշխարհի կուրութիւնը, այն չլացող թազերը՝ ան սպառնալից զաւագանները վշրելու, որ իր կեանքը ազատի անոնց գըտիսային վտանգներէն: Այս ազատութեան, այս հաւասարութեան օրէնքին առաջին նախանձախնդիրը եւ ըլլալ ուղելով, Վասակին քով ծառայութեան մոռած եմ՝ թերեւ յաջող ժամանակ մը զանամ իր յոյսը երակներուն մէջ մարելու . . . (ո՞՛Ֆի ձայներ) հրաւիրեալները կուզան դիմուումք:

ՏԵՍԻԼ Գ.

Նոյն, ուրացով բահանաներ եւ զօրականներ

Զանգակ.— Բաղմութիւն չըկայ, մենք մեղի ենք:

Պետրու .— Ուրեմն մեր կարծիքը հոս կրնանք ազատ յայտնել:

Ուսունի .— Մենք տեղ ազատ ենք:

Ծառան .— (Դեռ չը խմած զինովցած են այս մարդիկը):

Սուրմակ.— Ուրախութիւննիս նայինք:

Ծառալ .— Հրամայցէ՛ք աթոռներու վրայ (սպասառորներուն) աթոռները ուղղեցէք բաժակները լեցուցէք: (Հայերու մէջ ալ չատ վատեր կան եղեր):

Ուսունի .— Ի՞նչ ազնիւ կերակուրներ պատրաստած են մեղի համար: (Կակսին ուտել)

Պետրու .— (Հայը բերանը) Մեր ծառայութեան վարձըն է:

Զանգակ.— (զինիին բաժակլի վեցներով) Ի՞նչ աղնիւ զինի է, մարդ չը խմած կը զինովնայ:

Պետրու .— Մարդուս կեանքը կը փառաւորէ:

Զանգակ .— Ի՞նչ անուշ կերակուրներ են, կե՛ր, ա՛րք անձն իմ և ուրախ լի՛ք:

Ծառալ .— (Որկրամու մարդիկներ կերութումի ծանած են իրենց պատիւը):

Ուսունի .— Յաղթութիւնը մերն է, մէջ մէկ զինի խմենք:

Պետրու .— Այս է բարին բաժակի խմայ:

Սուրմակ .— Պարսկաստանի կենացը:

Պետրու .— Պարսկաստանի և Վասակի կենացը:

Ամենիք .— Կեցցէ՛ Պարսկաստան, կեցցէ՛ Վասակ:

Ամենիք .— Մեռնի՛ Վարդանը: (Կը խմեն)

Ծառալ .— (Տես ապերախտները, բարերար Հայ մը

կը նդովնէն):

Սուրմակ .— Վարդանն ալ չը նդովնէնք, ա՛ն ալ Պարսկի եղած է:

Պետրու .— Ի՞նչ կ'ըսես:

Ուսունի .— Մի՛ խաբուիք, Պարսկաստանի շլթանիւրը ձեռքէն թօթափելու համար՝ խոթէութիւն մըն է ըրածը, ծառայութիւնը անոր սովոր ընկել տալու համար, առաջ պէտք է անոր սովոր արխոնը քամել . . . շլթանիրէն արձակուելէն ի վեր Հա աստանի վրէժինդրութիւնը ձեռքի տուիլ մոգերուն ու Պարսից զօրքերուն դէմ կը զրուէ Ղեռուը իրեն օգնական առած:

Ծառալ .— (Ի՞նչ անօրէն մարդիկ, պատսառ մը հացի հարուց Պարսկիը կը պաշտպանեն):

Զանգակ.— Հաստ միւս քահանաները:

Ուսունի .— Մենք պատսուով իրենց սունին մէջ ընդունած են մողերը:

Պետրու .— Ուրեմն անհոգ ըլլանք, մէկ քանի հայեր գործ չեն կրնար ուսնել. հնաւերար, ամբողջ Հայաստան մէկ քանի օրէն նոր Պարսկաստան մը կ'ըլլայ:

Սուրմակ .— Ես ալ նոր Պարսկաստանի համար բաժակ կ'առաջարկեմ:

Ամենիք .— (Բաժակահարութիւններով) Կեցցէ՛ նոր Պարսկաստան, կործանի՛ Հայաստան:

Ծառալ .— (Հայ են՝ և իրենց հայքինիքը կը նդովնէն):

ՊԵՏՐՈՆ .— Իմ վաստքս այն է որ, ևս հայ քահաշնայ մը բլլաղով՝ պարսիկէ մը աւելի ծառայութիւն ըրի Պարսկաստանի՝ այս խաչով և այս աւետարանով :

ՈՒՅՈՒՆԻՒ .— Մենք ալ շատ զործ աւետարանք այս գէնաքերով :

ՍՈՒՐԻՄԱԿ .— Իմ գէնաքերս ալ շատ յոզնեցան :

ՊԵՏՐՈՆ .— Է՛ն, ուրեմն Վասակի ամէն հրամանները կատարուած են :

ԶԱՅԻԳԱԿ .— Սյու՛ . . . Մօսկրս Արշակունի թաղը Վասակի գլուխը պլասի տեսնենք :

ՊԵՏՐՈՆ .— Ամենքս ալ ասոր կը վասիաքինք :

ԶԱՅԻԳԱԿ .— Սա՛ անուշ գինիին ալ վասիաքեցէ՛ք :

ՊԵՏՐՈՆ .— Սյս բաժակնիս երդով մը մնարենք :

ԶԱՅԻԳԱԿ .— Մեր խմբակին երդովը :

ՈՒՅՈՒՆԻՒ .— Շա՛տ աղէկ կ'ըլլոյ :

ԶԱՅԻԳԱԿ .— Ոտքի ելէք (կ'ելնեն) :

ԾԱՌԱՋ .— (Տեսնե՞նք սա խմբակին երդը) :

Ե Ր Գ

(Միաձայն)

Մենք անուամբ Հայ՝ սրտով Պարսիկ,

Մասնենք մեր ազգ՝ մեր հայրենիք,

Միշտ վնասենք Հայոց ազգին,

Միշտ վայելնեք ազնիւ զինին:

Յազկերս, Վասակ

Թո՛ղ մեզ փրկեն,

Հայոց ազգին

Ողորմ ձայնէն:

(Քահանաներ)

Մեր ծեռք տուին Խաչ, Գաւազան,

Միրով հովուել մայր Հայաստան,

Սյս բաժակաւ մենք ուխտած ենք

Որ Հայաստան յերկրէ ջնջենք

Յազկերս Վասակ են :

(Զինուորական)

Սուր եւ նիզակ մեզի տուին,
Պաշտպան կենալ Հայաստանին,
Հայոց վնասուն՝ ուխտենք բաժկաւ
Զգել մեր սուր կենազրաւ,
Յազկերս, Վասակ են . . .

(Միաձայն)

Գինին է մեր Ազգ եւ Աստուած,
Մեր խիղճ չզգար՝ ողք. կոծ եւ լաց,
Պարսիկ եղանք, Հայը կ'ատենք,
Կործանին Հայը՝ մենք ժառանգենք . . .
Յազկերս են :

Ի սէր շահուց մեր՝ կորսուին
Անմեղ կեանքեր Հայոց ազգին,
Խմենք զինին մեր սիրտք ցնծան,
Մէկտեղ ցնչենք մայր Հայաստան . . .
Յազկերս են . . .

ՏՒՄԲԼ Դ-

Նոյնի, Միհրներսեն (Ծափեալ) եւ Վասակ .

Վասակ .— Օտարական չկայ, կրնաք արջազգեստ .

Նիդ հանել :

Ծառալ .— (Միհրներսեն է)

Միհրներսեն .— Մեր հաւատարիմերն են, ուրախութիւնիդ շարունակեցէ՛ք :

ՊԵՏՐՈՆ .— Ձեր այցելութեամբը ուրախ եղանք :

ԶԱՅԻԳԱԿ .— Ձեր վասոքը՝ մեր կատարեալ ուրախութիւնն է :

Միհրն է :

Միհր .— (Վրացիին կը նմանի . . . նոյն լնքն է)

Դո՛ւ հո՛ս ի՞նչ զործ ունիս :

Ծառայ. — (Ի՞նչ ըստ) ... Ես այս տան ծառան եմ։
 Մին. — Վրացին դուն չե՞ս։
 Վասակ. — (Իրաւ անոր կը նմանի)։
 Ծառայ. — Ո՞ր Վրացին։
 Մին. — Պարսկաստանի թշնամիներուն շղթաները քակողը։
 Ծառայ. — Այս՝, ես եմ անոնց ազատութեան թելադիր ... օրէնքը գարկած չէր այն շղթաները։
 Վասակ. — Ուրեմն մեր գիրկը օձ կը սնուցանենք եղեր։
 Մին. — (Պարագեամի) Վասա՛կ, ձեր մէջ զաղանի նպաստակ մը կայ ... խաբուած է Պարսկաստան։
 Վասակ. — Իմ հաւասարմութեաննս կամկածիլ ...։
 Մին. — Թերեւս այդ անձը ձեզի խորհրդակից ըլլայ։
 Ծառայ. — Քաջ մը մի՛ նախառեր ... Հայրենեաց մասնիչի մը խորհրդակից ըլլամ։
 Մին. — Ուրեմն հսկ ի՞նչ գործ ունիք։
 Ծառայ. — Իմ նպաստակս Հայաստանի մեծ ծառայութիւն մը ընել է։
 Մին. — Ի՞նչ ըստ կ'ուզէք։
 Ծառայ. — Միջոց մը զտայ Վարդանի կեանքը փըրկելու, միջոց մըն ալ կը վնասեմ (Վասակը ցոյց տալով) ասոր կեանքը կորսնցնելու ...։
 Վասակ. — Զօրակա՛նք, զեռ հրամանի՛ կ'սպասէք ... (զօրքերը կը բոնին ծառան) զո՛ւրս քաշեցէք, սասկեցուցէ՛ք զինքը ... ի՞ո՞ղ յաւխենականութեան մէջ իր դիտաւորութիւնը ի գործ դնէ ... (կը տանին)։
 Ծառայ. — Դողա՛ այդ ամբարշտութենէդ ...։

ՏԵՍԻԼ Ե-

Վասակ, Միններսի եւ Ուրացեալներ
 Վասակ. — Կարեցէ՛ք ասոր ձայնը։
 Ծառան. — (Ներսէն) Ա՛չ, Վասա՛կ ...։

Ներսէն. — Մեռա՛ւ թշուառը։
 Վասակ. — Ասոր գործն ալ լիցուցինք ... հաւատացէք հիմա, իշխա՞ն։
 Մին. — Ճշմարիս կ'ըսեմ, դուք այս պարսպայիս մէջ անզգոյն գանուեր էք։
 Վասակ. — Թշուառը՝ իբր օտարական պանդուխտ, տոքս զիմեց. թէև կը նմանցնէի մէկու մը, միտքս երբէք պայծառ վկայութիւն մը չէր կրնար տալ ... զութը շարժեցաւ վրան, զինքը սկայ խնամել, ինքն ալ շատ գործերու մէջ հաւասարիմ գանուեցաւ ... բայց ըլնորհ ունիմ ձեր այցելութենէն, որովհետեւ մնան փրկեցիք ... այսունեսու կիանքս ձեր շնորհին պարտական եմ։
 Մին. — Յիշէ՛, Վասա՛կ, քաղաքականութեան նեղ շրջանին մէջ կ'ապրինք, մեծ զգուշութիւններ ըրէ՛, մինչեւ իսկ քու անձէդ կասկածէ ... յիշէ՛ որ Հայաստանի զէմ կը մրցինք, յիշէ՛ որ հայերը գերեզմանին մէջէն ալ իւրենց թշնամիններուն կը վնասեն ... (Ուրացողները ցոյց տալով), բայց ասանց լսելիք չ'ունիմ ... եթէ չեմ սխառանքը, անոնց երակներուն մէջ վաղաղ արիւնք՝ Պարսիկի մեր, անոնց երակներուն միջ վաղաղ արիւնք՝ Պարսիկի մերին է ... քանի տարիէ ի վեր հաւասարիմ ծառայութիւններ կը մտառայնեն, անոր համար պատուոյ և շլթիւններ կը մտառայնեն, արժանի են ... բայց կը կրնեմ խօսքը, ուրիշներէն միշտ զգուշացէ՛ք։
 Վասակ. — Հայկական զիտութիւնը մարդուս ուլուխը միշտ անզգուշութիւններ կը բերէ, ա՛խ, հնար ըլլար երակներուս արիւնը զուրս վաղցնէի, անոր տեղը վազրի երակներուս արիւնը զուրս սրառվս մէկանէդ զուրս նետէի, արիւն լեցունէի, զուժը սրառվս մէկանէդ զուրս նետէի, անոր տեղը զաղանի մը սիրտ դնէի, այն ասեն թեռեւս խիստ վարուիմ ամէննեն հետ։
 Մին. — Քաղաքական պաշտօնեանները գութ կը կու գութիւններ ըլլելու երթամիք։
 Պետրոս. — Մեզի հրաման շնորհեցէք՝ նոր ծառայութիւններ ըլլելու երթամիք։

Միհր. — Շա'տ աղէկ, յաջողութիւն կը մաղթենք բասակ. — Ես ալ :

Միհր. — Աշխատեցէ՞ք, մեծ պիտի ըլլայ ձեր վարձքը : (Կ'երթայ)

ՏԵՍԻԼ Զ.

Միհրներսին եւ Վասակ

Միհրներսին .— Արխնուուշտ գէնքերու չ'անսած զործը՝ չար մարդիկ շատ հնարքներով կրնան ի զլուս հանել . ահա ապացոյց՝ քու արքանեակներդ . . . որքան կարելի է աշխատոէ անոնց ձեռքով Հայը Հայուն դէմ հանել, սակայն քաղաքական և զինուորական զաղանիքներ բնաւ անոնց ըլ յայտնեմ, անոնք սկզբունք չ'ունին անձնական շահու մը համար այն զաղանիքները կը ծախին :

Վասակ .— Այդ մասին մի՛ տարակուսիք :

Միհրներսին .— Ժամանակը սուզէ, երթամ, վարդան իր դիմադրութեամբը մեծ արգելքներ կը հանէ, մեզի դէմ . . . տեսնենք, դիւանազիտական շրջանին մէջ պիտի կը հանանք առաջն առնել՝ սունց գէնքի դիմելու : (Կ'երթայ)

ՏԵՍԻԼ Է.

Վասակ առանձին

— Վարդանին դիմադրութիւնն ինձի զուարձութիւն կը պատճառէ . սուզէց ուրիշ քաղաքական մեծ օգուտ մ'ալ կայ ինձի . . . շատ բարերախտ եմ . . . եթէ Հայաստան Արշակունի թագը՝ Պարսկաստան ալ Սասանեան զահն ինձի կ'երկնցնէ . . . այս', Վարդանայ և Պարսից զօրութիւնը իրարու դէմ պիտի խորտակի և ես կարող պիտի ըլլամ Պարսկաստան, Հայաստանը երկու զնդակներու նման բազուկներու մէջ առնել և այդ աշխարհներուն մէջ

անիսոփր պատղամներ որուաւ . . . բազզը զիս աշխարհակազմեակն մը պիտի անուանէ . . . ա՛խ, եթէ անդութ ճակատազիրս ալ յաւիտեան մահ խափանէ, ահձս ահման ասուաւ մը պիտի հրատարակեմ . . .

ՏԵՍԻԼ Ը.

Նոյն եւ ծառայ մը

Ծառայ .— Իշխան', ի՞նչ կընէք . . . պաշտուածէք :

Վասակ .— Ի՞նչ կ'ըսէք . . . ցնորս՞ծ էք :

Ծառայ .— Ի՞նչ ցնորք, Վարդան իրեններով ներս յարձակեցաւ :

Վասակ .— Իրա՞ւ կըսէք . . . ի՞նչ կը լսեմ (ոտքի ձայներ) սո՞ւրս, (սուրը կը բարէ) . . . օ՛, վասոքերն ալ մեծ վտանգներ ունին եղեր (ձայներ) ի՞նչ ձայներ են. . . որո՞ւ դէմ պիտի կոռում, Վարդանին, ո՛հ, անունն իսկ զիս կը դողայնէ (ձայներ) ինքինքս կորսնցնեմ . . . բայց ի՞նչ յաւսահատութիւն. վասոքերէս չ'եմ կընար զատուիլ. . . չ'եմ ուզեր մեսնիլ. . . Հայաստանին թազը պիտի ժառանգեմ. . .

ՏԵՍԻԼ Թ.

Նոյն, Վարդան եւ զօրին

Վարդան .— (Առւսերամերկ) Վասակ' :

Վասակ .— (Ետ քաշուելով) Վարդան', յուսահասի մը դէմ մի նետուիր :

Վարդան .— Ահձնատո՞ւր եղիր :

Վասակ .— Ահձնատո՞ւր ըլլաւ, ասիկա քաջի մը զործէ չէ . . . զո՞ք զաւով զիս կը բանէք :

Վարդան .— Վաստութիւնդ զքեզ մեր ձեռքը կը մասնէ :

Վասակ .— Զևմ ես վաս. . . սոսկացէ՞ք զէնքերէս :

Վարդան .— (Բայլ մ'առնելով) Զզէ՛ զէնքդ :

Վասակ. — Քոջ մը զի՞նքերը ձեռքին մէջ մեռնեւ
լու է :

Վարդան. — Վասակ, թէե զու Պարսիկ եղար, բայց արխւնդ հայու արխւն է... հնագանդէ՛, չէմ ուզեր հայու արխւնով սուրս ներկել...:


Վասակ. — Ե՞ս Պարսիկ... խօսքով կ'ուզես դուն զիս ևեցնել... զուրս եւ:

Վարդան. — (Վրան յարձակելով) Զե՞ս հնագանդէ՛ր: (Զինումարտութիւն)

Վասակ. — (Կիյնայ և կը բռնուի) Թողէ՛ք զիս, ես Հայաստանի մարզպանն եմ:

Վարդան. — (Զօրքերուն) Կապեցէ՛ք, Հայաստանի շղթաները զի՞նքը մասնող զաւկին վրայ թո՛վ ծանրանան:

Դ. Ա. Ր. Ա. Գ. ՈՒՅ Բ. Բ. Կ. Գ. Գ. ՈՒՅ ՈՒ Ի. Ի.



ԱՐԱԲՈՒԱԾ Դ.

ՏԵՍԻԼԱ.

Վասակ եւ Ռեսունի

Վասակ. — Ասանկ սուս երդումով մը կրցայ հայոց կառողութենէն ազտոտիլ... գիտելի՛ր որ փառասէրը սուս ալ կը խօսի, պատույն վրայ երդում ալ կ'ընէ: Նեղը մնալու լլայ տմենէն մնլիքարին ալ կը խնճարի, անհնարին առաջարկութիւններուն անզամ կը զիջանի՛ մինչեւ որ զի՞նքն ապահովցնէ, մինչւ որ իր ակնկալութիւնները զի՞նքը ողջունեն, անէն եաքը ամէն բարիք կը մեռնայ, ամէն բան կ'առէ, տմենուն գէմ կը զինուի, մինչեւ իսկ իր եղրօր արխւնոս զիսկին վրայ կը կոփէ՛ իր վիրաւուած զզացումը յազեցնելու:

Ռեսունի. — Տէ՛ր իշխան, քանի որ ձեր հանճարովն աշխարհիս ամէնէն նշանաւոր մարզպանը կը հանդիսաւ նաք, իրաւունք ունիք որչափի ասէք Վարդանը, որ

սոսկական զինուսրի մը նման զձեղ մահապարտներու շղթաներով անպատճեց:

Վասակ. — Մինակ ստեղո՞ւ իրաւունք... ա՞հ, մեծ է վրէժինդրութիւնս, այդքանով դո՞ւ չ'եմ լլար... արզարեւ, հայերը ինձի ներցյին. բայց ես ներել չ'եմ զիտեր... ինձի ներելնուն փոխադարձ ուխտած է սիրոս՝ Հայաստանը իր զաւակներուն արխւնովը ներկել, իրեն սպարիսաներուն ներքեւ նախճիրներ զործել: Վերջապէս ամէն տեսակ սմիրներ աչքս սուսծ եմ մինչեւ որ յաջողիմ Վարդանի կողէն ափ մը արխւն խմել, որ կատաղի բարելութեանս բոցը մարի:

Ռեսունի. — Բաղզը ձեզի գաղնակից է. երբէք մի՛ տանջէք ձեր սիրան, այդ ամէնուն պիտի յաջողիք:

Վասակ. — Վասահ եմ, քիչ միջոցի մէջ հայերուն զիսուն պիտի վլցնեմ Հայաստան, գարձեալ անոր տերակներուն վրայ պիտի թագաւորեմ... թո՛ղ կործանի Հայաստան, բաւական է որ Վասակ արքայական թագ մը զնէ իր գլուխը... կը ահանեմ որ յոյսն ալ իմ փափաքներուն այս', կը պատասխանէ... արդէն Հայոց պատերազմական պատրաստութիւնները, անոնց զինուորական և քաղաքական բոլոր գալանիքները Միհրներսէին հաղորդած եմ... զիսես իմ հաւասարիմս, անյալթելի բանակներուն չը զործած քաջութիւնները՝ մատնութիւնը մէկ վայրկեանին մէջ կը կատարէ, իսկ եթէ առանց յաջողեւու մեռնիմ, ո՞հ, երգում ըրած եմ զերեզմանէս անզամ զրգուել արքանեակներս... այս', Հայաստանի զէմունեցած անձութիւնս անոնց ժառանդ պիտի թողում...:

Ռեսունի. — Հայերը չե՞ն ճանչնար պարծանեաց անձերը, և ճանչնան ալ՝ փախանակ յարգելու կ'առեն. անոր համար իրենց վլձակը երթալով զերութեան պիտի ենթարկուի:

Վասակ. — Անձիս զէմ եղած նախատինքն է որ այս վերջին մատնութիւնն ինձի ընել առաս, թո՛ղ Վարդան

ուրախտնայ թէ ինծի աղթեց, բայց չշմարիս վառքը
վերջին յանթանակն է... արդէն վառքերը՝ զութը սրտէ ու
վերցուցած էին, հայերուն ասելութիւնն ալ՝ վրէժինդիր
ողի մը անոր մէջ դրաւ:

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնի եւ Սուրբակ

Սուրբակ.— Տէ՛ր իշխան, թշնամիներու կազմանէ
մարդ կ'ուզայ... հնուանք ասկէց:

Վասակ.— Ո՞վ է:

Սուրբակ.— Ծպտեալ մը:

Վասակ.— Ուրեմն շուտով մեկնինք... մեղի չը
տեսնէ: (Կերթոն)

ՏԵՍԻԼ Գ.

(Վարդան առանձին Ծպտեալ)

— Հեռացաւ հայրենիքի մասնիչը... հայ մը իր վա-
սասիրութիւնը յազեցնելու համար կ'ուզէ հայրենիքը զոհել,
և անոր օրհասական հառաջանքներէն միսիթարուիլ...
ի՞նչ ունիմ վասակին ըսելիք, յանձանքը իսու է որ
զայն սատկեցնել խոհեմութիւն չըսեպեցի... որովհետեւ մէկ
կողմէն Պարսկատան կըսպաննայ, միւս կողմէն կոյր ժո-
ղովուրդին մէջ աղետալի գժառութիւն մը պիտի անշուշտ
ծաղեր... Ա՛խ, ժողովուրդի մը ազիսութիւնը օտար
թշնամիէ մը աւելի իրեն համար վտանգաւոր է, այս գա-
տը ապագային կը թողում, որ եթէ վասակը իրը հայ-
րենի մասնիչ պիտի դաստիարատէ թո՛ղ հայ ժողովուր-
դին ալ աղիսութիւնը կշտամբէ, որ իր բարերարը ու
գառիճը չը խարեկը... ասոնց վրայ խօսիլ օգուտ չունի,
մեծ է առաջիկայ վտանգը (ծունկի վրայ զալով) ա՛հ
Հայաստանի Ասուուա՛ծ, քեզի կ'ապաւինիմ:

ՏԵՍԻԼ Դ.

Նոյն եւ Հմայեակ

Հմայեակ.— (Վարդանը չը տեսնելով) Անյաջող
հանասպարհորդութենէ մը վերջ, ահա, նորէն կը վայեկեմ
հայրենի սահմաններուն լոյսը... Բայց ո՞վ կը տեսնեմ,
Վարդան.— Հմայեակ' է:

Հմայեակ.— Ա՛հ, իմ սիրելի եղբայրս, (իրարու կը
վարին)... եթէ կարօտութեան կաթիլները օտարութեան
մէջ թափեցի, թո՛ղ խողութեան արցունքներս քու զիր-
կըդ թափեմ... պանդիստութիւնէ վերջը, որչա՛փ քաղցր
է հարազատի մը գիրկը:

Վարդան.— Սիրելի եղբայր (լալով) մեր արցունք-
ները գժբաղդ հայրենիքին նուիրենք, որուն մեր սիրալ
կանխաւ նուիրած ենք արդէն... զիսէ՞ս արգեօք, սի-
րելիս... մոթ վայրկեաններու մէջ կ'ուզրի Հայաստան...
Յունաստանէն յաջող լո՛ւր մը:

Հմայեակ.— (Ա՛խ, ինչպէս պիտի վշտանայ) Յոյնը
օդնութեան առաջարկութիւնը մերժեց՝ քաղաքական ջնջին
սպասառաններ տառաջ բերելով, ես ասոյդ զիսեմ որ կրօնա-
մոլ ազգ մը մարդասէր չկրնար ըլլալ:

Վասակ.— Ի՞նչ գժբաղդութիւն... ահա Վասակի
քաղաքականութեան մէկ խարէութիւնն ալ:

Հմայեակ.— Արդէն Յունաստան Վասակին հետ գաղո-
նի քաղաքականութեամբ կապուած է... մուկուանդ ազգ
մը չը կրնար ձանչնալ այն ճշմարտութիւնը, թէ այն որ
կատէ իր բնիկ Ազգն ու Հայրենիքը, օտար մը չը կրնար
սրտի մաօք սիրել:

Վարդան.— Հմայեակ', սիրելիդ իմ Հմայեակ', եր-
կինք ահարկու վտանգով մը, ապազայ Հայաստանին կ'ու-
զէ դաս մը տալ՝ թէ տղէտ ժողովուրդ մը միշտ պէտք
է գժբախտ ապրի... կը տեսնես մեր հայրենիքի գժու-
թիւնները, կարծիքներու անհամաձայնութիւնները, մա-
նաւանդ առելութեան ողին՝ որ զանոնք կը սնու-

ցանէ . . . ահ , տասնք՝ միայն ասսնք հոմարձակութիւն կուտան Պարսիկին ար իր վենքը մեր բալդին դարձնէ : Պարզ ըսեմ . եթէ Յունաց աղջին առելութիւնը վիշտ մը կը դնէ մեր սրային մէջ , Վասակին ձեռքով նիւթուած ներքին մեքենայութիւնները՝ մեր քայլերուն առջեւ ու անդունդ մը կը բանահն . . . մենք այ աղխառնիւթեան բաժակը խմած՝ անզգուշաբար կը վաղենք անոր եզրը ու կ'սկսինք իրար անոր մէջ հրեւ . . .

Հմայեակ .— Ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ մեր դժբաղդ հայրենիքին ապագան . . . Յոյնը մեզ կատէ , Վասակ մեզ կը մատնէ , Պարսիկաստան մտն , արիւն կ'ապահնայ :

Վարդան .— Որդիսական պարտքն է իր ծնողքին խնամք տանիլ . . . մեր ծնողքը՝ մեր հայրենիքն է , այն մեզ ծնաւ , անոր գիրկը մեր ճակտին հանգիստ տուաս , մեր մատաշ հասակները՝ անոր օդն , հողն ու ջուրը կազզուրեց , այս շունչերն որ իրար կը խառնենք անիկա պարզեց . . . ուրեմն հիմա անոր վտանգներուն առջեւ՝ պէտք է մեր յոյսը օտարներէն վերանմաք , բայց ոչ մեր սրակեն . անոր փրկութեանը համար ընտրենք մեր մահը ու պարզերես գասանանք մեր նախնի քաջերուն քավ . . .

Յոյնը մեզ կ'տաէ՝ վեհանձն սրաի արհամարտութիւն մը բաւական է , Վասակ մտանութիւն կ'ընէ , մեր սիրան է անոր զօրասոր ոստիը , Պարսկաստան կ'ապահնայ՝ մեր քաջութիւնները և զէնքերը թո՛ղ պասոսախաննեն , տասնք ե՞ն մեր նուիրական պարտականութիւնները :

Հմայեակ .— Հայրենիք այդ սրարտքերը կը դնէ խղճիս վրայ . . . շորչափ հողիս այս կուրծքը կը տաքցնէ՝ իմ սուրս քու զէնքերուդ անրաժան ընկերը պիտի ըլլայ , Հայրենիքի աղասաւթեան համար մէկուել պիտի մըունեմ փառքի սոսպարէզը . մեր քաջութիւնները թո՛ղ պատասխաննեն գոռողին , որ մեր Հայրենիքին կապահնայ , իսկ եթէ անզութ ճակասագիրը մեզի մինակ թողու վըտանգներու տառչ , մահն ընտրենք արիւթեամբ ու թաղուինք հայրենի պարիսպներուն ներքեւ , մեր յիշատակները Հայրենիքի տուարինութեան զարդերն ըլլան :

Վարդան .— Մեծ է տուաջիկայ վտանգը , բայց քաջ մը պէտք չէ սոսկալ . . . քաջի մը վասուք՝ արեան դաշտն է , անոր նշմարիս անմահութիւնը՝ հայրենիքի սիրոյն համար սասացած վէրքն է , եղբայր իմ , հայրենիքի երաւանքը թանկաղին է , զայն պաշտպաննելու համար ցուցնենք մեր բաղուկներուն քաջութիւնը . . . մեր զէնքերը ու սիրակը հայրենիքի նուիրենք , մեր արիւնն ալ անոր սիրոյն համար իրար խառնենք՝ մահը անդամ թո՛ղ սոսկայ , քաջ մը այս ուիսուը պէտք է լնել :


Հմայեակ .— Եղբայր իմ , քաջ մը այն ժամանակ կ'անուստանայ՝ երբ իր հայրենիքին փրկութեանը համար վէրք մ'աւանէ . . . քաջութեանս և զէնքերուն վրայ կ'երաշնում քեզի հնա մեռնիլ : (Թմբուկներու ձայն)

Վարդան .— Ահա , Պարսից մահաղոյժ թմբուկները կը հնչեն , դու հոս սպասէ՝ երթամք քաջերու պատրաստեմ : (Կերթայ)

ՏԵՍԻԼ Ե.

Հմայեակ առանձին

— Փառասիրութիւնը զրած է մարդուս սրափին մէջ տիրելու տենջը . իր նովաստակին հասնելու համար՝ մարդկային արեան մէջ կ'առնէ իր քայլերը . . . ահ , բոված կայի արեան մէջ կ'առնէ իր քայլերը . . . ահ , բոված կայի աշխարհ խաղաղութեան կը ցանկայ , իսկ փառասէր մը բաւական է զայն ակնթարթի մը մէջ վրզովել : Անիրաւ բնութիւն , որքան ժլատ է մշակին քրտինքները վարձարելու՝ այնքան շատիլ է վասակէրը տիրենքները վարձարելու՝ այնքան մասակարարելով մահաւասակելու , իր արգանդէն տասատ մասակարարելով մահաւասակելու :



ՏԵՍԻԼ Զ.

Նոյն եւ ձայն մը

Չայնը .— Երիտասարդ :

Հմայեակ .— (Չորս կողմը նայելով) Մարդ չ'կայ . . .
գետնէն կուգայ այս ձայնը :

Չայնը .— Օդնէ՛ թշուառի մը :

Հմայեակ .— Բայց ո՛ւր է . . . ո՛վ պիտի ըլլայ :

Չայնը .— Ճշմարտութեան զոհ մը :

Հմայեակ .— (Անմեղ զատապարտեալ մ'ըլլալու է) . . .

Ո՞ւր ես :

Չայնը .— Հիւսուած սրբիսպի մը մէջ :

Հմայեակ .— (Ո՛վ Ած , մարդկային չարութիւնը նորորինակ զատապարտութիւն մը հնարած է) Երթամ թերեւ օգնութիւն մը կրնամ ընկել : (կերթայ)

ՏԵՍԻԼ Ը.

Վարդան , Ղեւոնդ , զօրք եւ քահանաներ

Վարդան .— Քաջն՝ , երկնքի արհամարած տեսարանը մենք ալ պիտի մտնենք սուսերամերկ , սակայն մետնինք ալ՝ ապրինք ալ անմեղ ենք . . . արդարութիւնը մեղի վկայ է որ Վասակին մասնութիւնն ու Պարսկաստանի դատապարտելի քաղաքականութիւնը մեր սուրերը պատեանէն կը մերկացնեն և ո՛չ թէ աշխարհակալութեան կոյր ողին :

Զօրք .— Մեռնի՛ Վասակ , կործանի՛ Պարսկաստան :

Վարդ .— Պարսկաստան խիստ առաջարկութիւն մը կընէ Վասակն իրեն գործիք ըրած , առաջարկութիւն մը որ կ'ուզէմեր ազգութեան մեր կրօնքին հիմը քայքայել՝ ապագային առջեւ մեղ վաս ամբաստանելու : Յիշենք որ պատուալ մեռնելու համար ստեղծուած ազգ մ'ինք յիշենք որ գեռ զինուորական ազգ մ'ենք , մեր ուսերն ու մէջ՝

քերը զէնքերը զարդարած են և մեր իրաւունքները պաշտպանելու դեռ զրութիւն ունինք . . . Պարսկաստան կը յանդգնի ասանկ Ազգի մը խիոճը գերել և աղասութիւնը իր երկաթի շղթաներուն ասկ ճգել յիշեցէ՛ք ուրեմն թէ երբ մեր զրութիւնն ու զէնքերն անոր առաջ փշրին , մեր անզէն ապագան ի՞նչ դառն հետեանքներու և փշրին , մեր անզէն ապագան ի՞նչ դառն հետեանքներու և աղետալի արկածներու պիտի մատնուի . . . այն որ միայն ներկայն կը խորհի , ապագային արհամարանքներուն արժանի է . . . հեռացնենք վտան անունը մեզմէ , ապասութեան համար միայն զէնքերը գրկնքնք և ընարենք պատուալ անոնց վրայ մեռնիլ :

Զօրք .— Զինք մենք վտան . . . պատերազմի դիմենք , պաշտպանենք հայրենի աղասութիւնը :

Ղեւոնդ .— Քահանանեն՝ ր , այս պատերազմը աւելի վասուառը պաշտօնեաներ մեղ պիտի հանդիսացնէ աշխարհի առջեւ . . . այս կուիւը պատուոյ և իրաւունքի կուիւ մըն է , Աստուած և հայրենիք պարտք կը գնեն մեր վրայ , մեր քաջերուն հետ մէկանդ մեռնիլ , մենք թէւ Քրիստոսական կրօնքի պաշտօնեաներ ենք , աշւ մեր ազգութեան ծաղումն անկից ալ առաջ է , և ազգային պատութեամբ կը վայեկնենք այն երկնային ձաւագայթները , որ հանդարս խազի մէջ կը սփռեն . իրենց նշոյլները . . . մեծ է ներկայ վասնզը որ մեր զէնք առնելը անհարժեշտ մեծ է նուրեայ վասնզը որ մեր զէնք առնելը անհարժեշտ մեծ է կիսնք հաւայ կը վճռէ . ուրեմն առանց վարսնելու մահ և կիսնք հաւայ լու ընտրենք հայրենի աղասութեան համար :


Քահանաներ .— Մեռնինք ապրինք հայրենիքի համար :

Ղեւոնդ .— Աշատն Աստուած Մասեաց սրտին խաչ մը նուրելի առաջ անոր ձևքը զէնք մը տուաւ , թշնամին կուզէ այն զէքը անոր ձեռքին մէջ փշրին , խաչն պիտի կուրծքին վրայ խորսակել՝ ընկերական և բարոյական ալ կուրծքին վրայ խորսակել՝ ընկերական և անպատճական առջարկութեան մասնիք մը ապագային փրմըննելու : Մեր ապրինք մասեաց և մեր ապագային փրմըննելու , եթէ ասանկ առաքինի մահով մեռնինք , կանքն ըլլայ , եթէ ասանկ առաքինի մահով մեռնինք ,

զերեղմանէն պիտի սկսի մեր ճշմարիտ անմահութիւնը... մենք ընտրուած ժողովրդեան մը հայր ենք, գործոլ օրինակ ընծայելու ենք:

Վարդան. — Լսեցէ՛ք քաջեր, Լսեցէ՛ք թէ մեծ կոչում մունիք այսօր և սրբազն ծտույթիւն մը պիտի ընէք Հայաստանին... ահա հոգեւորական պաշտօնեաներն իսկ կը պատրաստուին ձեզի հետ հայրենի աշխատութիւնը պաշտպանել իրենց աշխատովը, Լսեցէ՛ք, տեսէ՛ք և զօրացէ՛ք:

Զօրի. — Ազատութեան համար պատրաստ ենք մեր արեան վերջին կաթիլը թափելու:



ՏԵՍԻԼ Թ.

Նոյնի, Հմայեակ, Ծերունի, Զօրին

Հմայեակ. — Ճամբար բացէ՛ք:

Ծերունի. — Երակներուս արիւնը կարծես նորէն ողեւորեցու:

Վարդան. — Պիտի համշնամ ես այս ծերունին:

Ծերունի. — Ես Վասակին դժբաղդ հայրն եմ:

Վարդան. — Այս', նոյն ինքն՝ Ախոնին է:

Հմայեակ. — Մարդկային յարարերութենէ չուրի պարսպի մը մէջ փակուած:

Վարդ. — Թէև որդիու սատանայ մը... այլ գու հրեշտակ մ'ես... ո՞վ քեզ դատապարտեց:

Ծերունի. — Իմ գտամիր:

Վարդ. — Քու զաւակիդ... Վասակին համար կը սես:

Ծերունի. — Այս', Վասակ. . . հայրենիքի դէմ գործած իր չարիքները միշտ կշտամբելուս համար, սիրած զաղանի ոխ մը կը սնուցանէ եղեր՝ և այս ոճիրն ալ վատերու ձեռքսով գործելու խիղճ՝ չ'ըրաւ:

Վարդ. — Ի՞նչպէս:

Ծերունի. — Խարեւայ քահանանեով հարկաւ կը ճանչնաք... օր մը սովորական աղօթքս կ'ընէի այս դաշտին վլայ, այդ վասերն՝ որ գաղանի կը գիտեն եղեր՝ իսկոյն բոնեցին զիս, սարին՝ ձգեցին այլ սոտրերկրեայ խորշը... այս գժոխային անիրաւութիւնն սմնմեղ ծերութեանս դէմ գործելով, թողութիւն ալ կը խնդրէին, «ի՞նչ ընէնք, կ'ըսէին, սորւոյդ հրամանը կը կատարենք...» վերջապէս այն քարայրին մուտքը որմով մը վակեցին... ձիւտ տարի մ'է որ հոն կապրիմ:

Վարդ. — Այդքան ժամանակ քեզ ո՞վ կերակրեց:

Ծերունի. — Այս եղեռը հովիւ մը կը գիտէ եղեր, գթացեր է վրաս, թէեւ Վասակի երկիւզէն չ'համարձակեցաւ այս գաղանիքը հրամարակել, բայց գաղանի քարայրս ծակելով՝ անկեց ՚ի վեր կը կ'երակրէր:

Վարդ. — Բոլոր Հայաստան քու կորուստ ողբալէ վերջ՝ կրկին կինդանի տեսնելով որչա՛փ կ'ուրախանայ, ո՞վ հայրենասէր ծերունի, (ի՞նչ սահմեկելի ոճիր, զաւակ մ'իր հայրը մութ քարայրի մը մէջ կը վակէ անօթի մեռցնելու) զքեզ քարայրի մէջ գտասպարտող զաւակը հիմա ալ Հայաստան Պարսից մասնեց անոր համար պարտաւորուած ենք յարգել այս անարդ նիւթերը (դէնքը կը ցուցնէ):

Ծերունի. — Ինձ դէմ գործած յանցանքը կը ներեմ իրեւ գորովագութ Հայր մը, այլ Հայաստանի դէմ նիւթած մասնութեան համար, վրէժ կը պահանջեմ իրեւ ծշմարիտ հայ... ինձ ալ սուր մը տուէ՛ք, ես ծնայ Հայաստանի նախատինքը, պէտք է զախ ես սատկեցնեմ հայրենի աղաստութեան համար: (Սուր կուտան)

Վարդ. — Տեսէ՛ք, Արշակունի՛ք, ծեր մը Հայրենիքի աղաստութեան համար զէնք կը վերցնէ իր ամբարիշտ զաւակէն վրէժ լուծելու, ուրեմն թո՛ղ այս օրինակը քաջալերէ մեր բազուկները... մեր թափած արիւնները թո՛ղ բողոքէն երկնից և մարդկութեան առջեւ մինչեւ որ բոնութեան շղթաները խորտակուին... կ'աղա-

չեմ, քաջ նիզակակիցներս, ասոր համար ուխտեցէ՛ք ինձի
հետ մեռնիլ:

Զօրք. — Կ'ուխտենք աղասութեան համար մեռնիլ:
Վարդ. — Այդ ուխտին վրայ մեռնելու ժամն առա
հասած է... վերջին ողջոյն մ'ալ ուղղենք մեր հայրենիքն
նիզին և մեր սուրերն ու կեանքն անոր փրկութեանը
նուրիենք: (կ'ակայն միտաճայն երգել զէնքերնին մերկացած)

ԵՐԳ

Տուի վերջին նրանեւս, բա՛զ Արշակունիք,
Մահուն և արթին խնդրեն հայրենիք,
Հապ' օ՛ն փուրացուք ի գոր մատինի դաւս,
Կոխել առարուր բզբեամեաց դաւս,

0'ն ի զէ՛ն ի սուր,
Բա՛զ Արշակունիք,
0'ն, ի վրէծ ի սուր,
Բա՛զ Արշակունիք:

Թէ գերեզման են լեխմի հայրենեաց,
Գոռող բժնամուն պրծեալ դիական,
Վաս Արշակունեաց բազին սրբազն,
ՄԵն մի ի ձենչ, բա՛զ, զ ն նուիրական:

Թո՞ն բազուրեան,
Զէնի մեր ողան,
Արիափ'ր Արշակունիք,
Ի սիր ի բունդ,
0'ն փուրացուք,
Հապ' օ՛ն յառաջ,
Ի ուզմ ի ման
Ի վրէծ, ի ման:

ՎԱՐՍԳՈՅՑՔ ԿԸ ԳՈՅՑՈՒԻ



ԱՐԱՐՈՒԱԾ Ե.

ՏԵՍԻԼ Ա.

Վասակ, Ուշունի, Սուրմակ և զօրքեւ

Վասակ. — Հաւասառիմներս, լաւ ուշադրութիւն
ըրէ՛ք... ամէն մարդ բարեկամ մի՛ ճանչնաք, և ամեն
բարեկամի գաղանիք մի՛ հաղորդէք... առա կը աեմնէք
խարեւայ քահանաներն որ հեռուէն գէսի այս կողմը կը
զիմնեն, ասոնք մինչեւ գերեզման ինձ հաւասարմութիւն
ուխտեցին իրենց պատիւն ու խիզճը վկայ կոչելով, կը
ցաւիմ որ ևս առ անխորհրդաբար բալոր գաղանիքս անոնց
մերկացայ, հիմա լսած ևմ ասոնց մէկ նենգութիւնն եւ
քանի որ ասոնք կենդանի ան սիրառ երբէք կասկածէ
աղատ չբախտի ըլլայ:

Ուշունի. — Տէ՛ր իշխան, մենք ասոնց հաւասար-
մութեան վրայ մեծ վասահութիւն ունինք:

Վասակ. — Ես ալ այդպէս կը խարուեի, սակայն
զիտէ՛ք ի՞նչ նենգութիւն ըրին... Հայրս կորմնցունել
խօսացան, ինձ հաճելի երեւնալու համար՝ անոր կեն-
դանութիւնը ինձմէ ծածկելով՝ մնաեալ հրասարակեցին...
առա ասանկ փոքրիկ ծառայութեան մէջ անգամանա-
ւատարմութեամբ վարուեցան հետո... շատ հաւանական
է որ վազն ալ ուղղակի ինձի գաւաճանութիւն ընեն:

Ուշունի. — Ուրեմն հրաման մ'րէ՛ք:

Սուրմակ. — Մէկմէկ գերեզմանական հարուա՛ծ:

Վասակ. — Հիմա ինձ մամիկ ըրէ՛ք, սիրելիներս, երբ
Հայաստանի գանք ժառանգեմ տէրութեանս բոլոր ներ-
քիտէ՛ք որ բոլոր ազգականներս և բարեկամներս մեռ-
գուցի, հիմա ամբողջ յոյսու զուք էք, անձս ձեզի արգէն
հաւատացեր եմ. այս գործն ալ ձեր իսկճին կը թողում,
բայց կ'աղաչեմ, գաղանի պահելու էք այս ծառայութիւնը
... ես չե՛մ ուզեր որ Պարսիկները լսեն, այն ժամանակ
վրաս կասկած կը հրաւիրեմ... կարծեմ հասկցաք ըսածս:

Ուշունի. — Եշխան, զուք անոնք եղեք:

Սուրմակ. — Այդ հոգք մեր վրայ:

Վասակ. — Վասահ եմ... առա իրենք կը մօտենան
Ես հեռանամ: (կ'երթաց)

ՏԵՍԻԼ Բ.

Ուսունի, Սուրմակ, խաբեբայ հանանաներ
Պետրոս .— Հոս են մեր քաջերը . . . ապահով տեղ ենք :
Ուսունի .— (Գլխունուն գալիքը, չեն զիտեր)
Զանգակ .— Վարդան մեռնելուն կատարեալ պիտի
ըլլայ մեր ապահովութիւնը :
Սուրմակ .— (Չեն զիտեր որ Վարդանէն առաջ իրենց
դործը պիտի լմայ) :
Զանգակ .— Ինչո՞ւ տրտում կ'երեւիք :
Ուսունի .— Դատապարտեալ էք :
Պետրոս .— Ի՞նչ :

Սուրմակ .— Լոեցէ՞ք :

Պետրոս .— Զուարձութիւն կընէք :

Ուսունի .— Զուարձութիւն . . . մեզի ալ խարել
կ'ուզէք խարդա՛խ զառամերալներ :

Պետրոս .— Զէ՞ որ մենք իրարու սիրելիներ ենք . . .
թշնամիներուն կորստեան քի՞չ բաժակահարութիւններ
ըրէնք :

Սուրմակ .— Ուրիշներուն կորստեանը համար ուրա-
խացաք, ձեր գատապարտութեամնը համար ալ պէտք չէ՝
սրտնջել :

Պետրոս .— Համարձակութիւննիդ չտին անցաւ,
կատակն ալ սահման մոռնի :

Զանգակ .— Գիտէ՞ք, մենք Վաստին խորհրդա-
կաններն ենք :

Ուսունի .— Մենք հոս դատ տեսնելու եկած չ'ենք . . .
զօրակա՞նք, կապեցէ՞ք այս թշուառները, (կը կապեն).
տարե՞ք սատկեցուցէ՞ք, իրենց դիակները դազաններու
ինջոյք մ'ըլլան :

Պետրոս .— Ի՞նչ կուզէք, ի՞նչ է մեր յանցանքը :

Ուսունի .— Խարձութիւննիդ :

Զանգակ .— Ո՞վ խարեբայ չէ :

Սուրմակ .— Հզօրագոյնը :

Զօրք .— Քալեցէ՞ք :

Պետրոս .— Թողէ՞ք, հիմա ձեզ կ'անիծեմ:
Ուսունի .— Ասէծքի դարն անցած է :
Սուրմակ .— Սյդ ակարին շանթն է . . . հուացուցէ՞ք
այդ չարագործները :

Զանգակ .— Դուք ալ պատուհան . . . (Զօրքերը կը
քշեն կը տանին)

ՏԵՍԻԼ Գ.

Ուսունի և Սուրմակ

Ուսունի .— Օրէնք և իրաւունք կ'աշխատին աշխարհ
հաւասարութեան վերածել, բայց քանի որ այս զէնքը
կայ, միշտ ակարը հզօրին զո՞ք պիտի ըլլայ . . . ակարն ուզէ
օրէնք, իրաւունք վնասէ, ուզէ փառք, զէնքն անոր
պահանջներուն անմրջապէս կը դիմազըէ, և ամէն բան
ապահով իրեն կը սեփականէ . . . ահաւասիկ մեր զէնքերն
հիմա սասանկ օգուան մը գործեցին, որ անզէն մարդը չը
կրնար գործել՝ թէեւ իրաւունք ունենայ:

Սուրմակ .— Սյդ շխակ է, ամէն զէնքեր ու շո-
թաներ իրենց օգուան ունին, բայց մեր զէնքերը Վաստ-
կին համար աշխատեցան :

Ուսունի .— Կը սխալիք, մեր անձնական շահն ան-
կից մեծ է այս ոճիրին մէջ, գիտցած ըլլաս որ առաքինի
մը իր կեանքը հայրենիքին կը նուփրէ, իսկ փառասէրը
հոգի կուտայ անոր, որ իր քայլերուն արգելքները կը
բառնայ . . . Հիմա քանի որ սասանկ պաշտօն մը մենք
կատարեցինք փառասէր Վաստին, անշուշտ մեծ պար-
գեւներ պիտի ընդունինք :

Սուրմակ .— (Ոտքի ձայներ) Խումբ մը հայեր այս
կողմը կը դիմն, հեռանանք :

Ուսունի .— Վաստինի մէջ չ'իշանք : (կե՛րթան)

ՏԵՍԻԼ Դ.

(Աղօքաւորներ կ'երգեն, տեսարան էլեկտրոնի՝ ամենոց ալ ծունկի վրայ կուզան)

Ի ՇՈՒՄՐԵԱՆ նիզակ եւ տեզ՝
Նախնիւր արեան գործեն, Ասուսա՛ծ,
Անդ մախարապաւ Պարսիկն սէզ,
Զիեան մախէ բնդ սին փառաց,
Զախն ՚ի կուրծս, աչն ՚ի զէն,
Երդնուն ըլրայս, բանս, գերուրիւն...
Ազգաց ազանց, ան համօրէն . . .
Յայց ել, Ասուսա՛ծ, չի՞մ փրկուրիւն:
Անա՛ անզուր դաւսն արխնուն...
Եղբայր զեղբայր մասնէ ՚ի ման,
Ո՞հ, Հայուստն ձեռն ՚ի ծնոն:
Ընդ իւր կարուս նեծէ ողբայ:
Ի զուն իշեալ բազկատորած:
Խնդրեմք ի մեն՝ յայց ել ի հայս,
Ասուսա՛ծ գրաց, Ասուսա՛ծ կիւնաց,
Փօրի անա արեան ըլրայս:

ՏԵՍԻԼ Ե.

Նոյնի, Շուշանիկ եւ Գիսակ,

Գիսակ.— Շուշանիկս, ահա հասանք Արտազու դաշտը :

Շուշանի.— Գիսակ, հայրս ո՞ւր է, երթանք պաշտպանենք զի՞նքը . . .

Գիսակ.— Դու հո՞ս կեցի՛ր . . . ես պատրաստ եմ իմ անձս նուիրելու, խոստացած եմ . . .

Շուշանի.— Մէկտեղ, մէկտեղ մեռնինք . . . թո՛ղ զիս +
Գիսակ.— Իմ նազելիս, յիշէ՛ ուխտ, քու կեանքդ յաւիտեան ինձ խոստացած ես, քու սրափդ մէրը բաւական է իմ քաջութիւնս կրկ ապատկելու, դու հոս կեցի՛ր, երթամ, վտանգը կը սասականայ . . .

Շուշանի.— Գնա՛ ուրեմն, կինդանի և յաջող դարձենիդ կը մաղթեմ: (կերթայ)

ՏԵՍԻԼ Զ.

Շուշանիկ, Ցովսեկի Կարդլիկոս

Ցովսեկի .— Ո՞վ է այն անձամովթ աղջիկը . . . Շուշանիկն է . . .

Շուշանիկ .— Արրազան Տէ՛ր: (Ճեռքը կը համբուրէ)

Ցովսեկի .— Այս վտանգաւոր տեղն ի՞նչ գործ ունիք, որո՞ւ հետ եկաք:

Շուշանիկ .— (Ի՞նչ լսեմ) . . . Վաղարշակին հետ . . . հօրս հեռանալին ՚ի վեր սիրաս հառաջանքներէ և աչերս արցունքներէ երբեք դադրած չեն, ասանկ անցանելի վիշտերով ապրելէ աղէկ սեպեցի, մեր քաջերուն հետ այս վառքի դաշտին վրայ մեռնիլ . . . բայց ո՞ւր է հայրս, արդեօք վասնողի մէջ է . . .

Ցովսեկի .— (Ի՞նչ խօսիմ) . . . Սիրուն աղջիկ, հայրդ հայրենեաց ծառայութիւն ընկել գնաց:

Շուշանի.— Ի՞նչպէս ծառայութիւն:

Ցովսեկի .— Հայրենասիրական:

Շուշանի.— Ուրեմն, ասածնորդէ՛ ինձ, այդ ծառայութեան ես ալ մասնակցիլ կ'ուզեմ:

Ցովսեկի .— (Ի՞նչ կը անօնեմ) . . . Վարդան վիրտուոսուած է:

Շուշանի.— Ա՞չ, հայր իմ: (կը գրկէ)

Ցովսեկի .— Ա՞չ, այս վաղիկեանիս կայծակ մը զիս շանիթարեց . . . այս ծերութեանս ժամանակ, Հայաստանի թշուառութիւնն ալ պիսի տեսնեմ եղեր (կուլայ):

ՏԵՍԻԼ Է.

Նոյնի, Գիսակ, Վարդան, (վիրաւորեալ) եւ զօրք Վարդան .— Այս հարուածը մահացու է . . . ձայն տուե՛ք արխագունտ բանակիս վրէմս լուծեն . . . ո՞վ կը տեսնեմ, իմ աղջիկս է զիս գրկոզը . . . Շուշանիկս, սիրուն աղջիկս . . .

Շուշանի.— Հայր իմ, ես եմ, քու գիրկու եմ . . .

Վարդան .— Աղջիկս, զաւա՛կս, համբոյք մը . . . ա՞չ այս համբոյին ձայնը շատ քաղցր իջաւ, սրափս մէջ . . .

Շուշանիկս, զիս գրկէ . . . (Ի՞նչ ախուր հաճոյք) . . . ի՞նչ բան ունի այս անմեղը:

Շուշանի.— (Ո՞վ Ասաուած, ի՞նչ պատասխանեմ) Կարդլան .— Ի՞նձ համար մի՛ արտմիք, արիւնս հայ-

թենիքս փրկեց, Շուշանիկիս թափած արցունքներն ալ
մահան ինձ կը քաղցրացնեն... (Յովսէլին) կազաչեմ հայր
իմ, ինչո՞ւ տխուր է գէմքդը... .

Յովսէլի .— Այդ վէրքը սրախս մէջ մեծ վիշտ մը
դրաւ... այսուհետեւ ո՞վ պիտի միսիթարէ Հայաստան... :

Վարդան .— Մի՛ վշտանար, Հայր իմ, կ'զգամ որ
վէրքը զիս կը մեռցնէ, այլ անոր յիշատակը ճշմարիտ
հայ սրտերու մէջ միշտ պիտի շարժի... հոգիս կենադանի
է, անոր խորերէն աներեսոյթ ձայն մը կը խօսի... .

Յովսէլի .— Աներեւոյթ ձայն մը... .

Վարդան .— Հայրենասիրութիւնս... վատերը զրկու-
ած են ասանկ փառքէ մը... .

Յուշան .— Հա՛յր, երթա՞նք, դարմանենք վէրքդ :
Վարդան .— Աղջիկս, իմ քալելու սահմանս մինչեւ
այս դաշտն էք, կեանքիդ առաջն վայրկեանը զքեղ
մօրմէդ որբ թողուց, այս վէրքն ալ զքեղ հօրմէդ կը
զրկէ, ես գերեզմանիս մէջ ալ անմահ պիտի մնամ եթէ
առաքինութեան և հայրենասիրութեան հետեւիս :

Յուշան .— Կը խօսանամ, բայց չե՞մ սւզեր որ
մեռնիս... Ահ, որբ պիտի թողուս զիս :

Գիսակ .— Ան դո՛ւթ հայրս... .

Յուշան .— Գիսա՞կ, մի՛ վշտանար :

Գիսակ .— Ահ, վեհանձն ողի, ես փոխանակ քեղ
միսիթարելու գուն զիս կը միսիթարես :

Վարդան .— Կը նուազիմ... սուրս, զէնքերս պա-
հեցէ՛ք... անոնք քաջութեանս վկաներն են... .

Յուշան .— Հա՛յր, ինչո՞ւ երեսդ ինձմէ կը ծածկես...
չ'ե՞ս սիրեմ զիս... օրհնէ՛ Գիսակը, նա անմեղ է :

Վարդան .— Կը սիրեմ քեղ գաւակս, օրհնեալ ըլլայ
Գիսակը, երջանիկ ասլրիք... .

Յովսէլի .— (Ահ, գասա՞կ, ահա փառացդ զո՞ր)

Վարդան .— (Երկնային ողի պատկ ձեռքին մէջ) Ողի՝
երկնային, մասունքդ թաթիսէ՛ վէրքիս մէջ, Աստուած,
Հայրենիք, աղասութիւն իմ արիւնովս այս բառերը
անոր շրջանակին գծէ՛, գերեզմանիս վրայ ձգէ՛ զայն...
այն պատկ փառքիս մրգանակն է... քե՞զ... կը նուի-
քեմ... իմ... Հայաստան... (կը մեռնի)

Յուշան .— (Վրան իշնալով) Հա՛յր, մահակից ըլլայ
կ'ուզեմ քեզի :
Գիսակ .— Շուշանի՛կ, չափաւորէ՛ վիշտ, պէտք է
դո՞ւն ապրիս... .

Յովսէլի .— Մեծ եղաւ կորուստդ Հայաստան, յա-
ւիտեան ողբա՛ :

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ա Յ Բ Բ Լ Կ Բ Գ Ո Յ Ո Ւ Ի Ի

ՎԵՐԴԱԲԱՆ

ՏԵՍԻԼ Ա.

(Թժոխի սահմաններուն վրայ մոգեր եւ կախարդ-
ներ կը ցըազային, նեռուեն դժոխի կ'երեւնայ բոցակեզ)

Մոգ մը եւ կախարդ մը

Մոգ .— Դուք կը կարծէք թէ մեզմէ աւելի մեծ
տեղ մը բանած էք մարդկացին բնկերութեան մէջ, յայտնի
է որ դուք կախարդ մ'էք, ես մոգ մը, կախարդները
գժոխիքի հրաշքները կը ներկայացնեն, իսկ մոգերը գժոխ-
իքի պատգամները մարդոց կը հազորդեն, ահա ինչպէս
կը տեսնէք թէեւ տարբեր պաշտօններ, բայց միեւնոյն
նպատակին կը ծառայեն :

Կախարդ .— Ներեցէ՛ք բարեկամ'մ, այդպէս չէ, արդա-
րեւ միեւնոյն նպատակին կը ծառայենք, բայց անու-
րանալի է որ ձեր և մեր պաշտօններուն մէջ մեծ վիճ
մը կայ, եթէ մենք հրաշքներու մարդկացին աչքերը կը
շացնենք, բայց չունիք նէ շարունակ պատգամներ տա-
լով կոկորդնիդ պատացէ՛ք, ո՞վ կարեսրութիւն կուտայ :

Մոգ .— Այդ յաջողութիւնը ո՞չ քու հրաշքիդ գործն
է և ոչ իմ պատգամիս, աղդերու տղիսութեան արդիւնքն
է, քանի որ մարդիկ տարբեր համազաւմներով կուրօրէն
նախախնամութեան մը կապուած ըլլալով շարունակ
կրօնական մոլեւանդութեամբ և ազգացին նախապաշտ-
ըռումներով վէճեր և պատերազմներ կը յարուցանեն, մեր
պաշտօններն ալ բնականաբար մեծ դերեր կը կատարեն,

իսկ երբ լուսաւորի մարդկային մտքի կուրութիւնը եւ դաստիարակութիւնը ընդհանրանայ, այն ժամանակ ո՛չ քու պաշտօնդ ստակ կ'ընէ և ոչ խմս:

Կախարդ.— Աշխարհ այդ նպատակին չպիտի կրնայ հասնիլ:

Մոզ.— Ո՛վ կարգիլէ:

Կախարդ.— Անձնական շահերն ու փառքերը: (Անազին ցնուամներ կը լլան, գերասանները կը սոսկան, գժոխքէն բոցեր կ'եննեն Բելիար իր բանակով դուրս կ'ելնէ և գերասանները ծունդ գալով կը խոնարհն):

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնի, Բելիար եւ դեւ:

Բելիար.— (Աթոռը բազմելով) Շատ գոհ և չնորհակալ եմ ձեր մասուցած հաւատարիմ ծառայութիւններէն, որով իմ գժոխային իշխանութիւնս կը բարձրացնէք:

Մոզ.— Իշխան գժոխոց, մեր պարտականութիւնն է այդ:

Կախարդ.— Դեռ մեծ ծառայութիւն մը մասուցած չ'ենք:

Բելիար.— Յուսով եմ որ պիտի մասուցանէք:

Մոզ.— Պարասա ենք:

Կախարդ.— Միշտ:

Բելիար.— Ներքին համոզմամբ կրնաք վկայել, որ ձեր նիւթական շահերն իմ բարոյական շահերուս հետ կապուած են, որուն հաւար մեծ զոհողութիւններ կը պահանջեմ ձեզմէ: Տեսէ՛ք, երկինք իր տկար շամթերովք կ'ուզէ զիս միշտ հալածել, և մարդկային ունան փիլսոփայութիւնն իմ պետութիւնս կ'աշխատի արհամարել, բայց ես այս կրկին վիճակներուն մէջ երջանիկ եմ, երկինք որչափ կը հալածէ իմ պետութիւնս, այնչափ աւելի կ'ընդարձակի, և նոյն իսկ իմ արբանեակներս արհամարհող մարդիկ բոցերու մէջ իմ նիւթերուս ներքեւ կը հեծին:

Մոզ.— Բոլոր ափեղերը պիտի հնազանդի ձեր իշխանութեան:

Կախարդ.— Միայն այդ նպատակին պիտի աշխատինք:

Բելիար.— Արդէն այդ նպատակը զիւրացած է, այս ոչնչութեան ձեզինակը իր արքայութեան մէջ զրիթէ ունայնութեան վրայ կը թագաւորէ... այսքան գարերէ ի վեր իրեն անունին խունկ ծխող և երկրպագող ափեղերակալներ, քաղաքագէտներ, դեղեցիկ թագուհիներ և աղջիկներ, և իր անուան փառաբանութեան տաճար կանգնող կրօնականներ, բալորն ալ իմ իրաւասութեան ներքեւ անէծք կը կարդան երկնքի դեմ:

Մոզ.— Շատ սասոյդ է:

Կախարդ.— Այդպէս պէտք է ըլլայ:

Բելիար.— Կրօնքներու սազմութիւնէ և աղջային զգացումներէ մի՛ վախնաք, անոնք աւելի ուժ կուտան մեր նկազատին, միայն դաստիարակութիւնը կը դոզացնէ իմ աթոռս, ուրեմն աշխատելու էք կրօնի և աղջային խարութեան զաղափարները զօրացնել, ագտնութիւնը և փառասիրութիւնը իրը իրաւանց և պատուի սկզբունք տարրացուցէ՛ք սրաերու մէջ... Մեծ ձիգ թագիեցէ՛ք ժողովրդական դաստիարակները հալածել տալու, որոնք մարդասիրական նիմերը ձգել կ'ուզին, իմաստակ, շողոքորթ և քսու դաստիարակները քաջալերեցէ՛ք և սիրելի ընծայեցէ՛ք, որոնցմով կարող պիտի ըլլաք մեր իշխանութիւնը փրկել սպանալից վասնդէ մը:

Մոզ.— Այդ մասին վստան եղէք:

Կախարդ.— Միշտ ատուր կ'աշխատինք:

Բելիար.— Շատ լու... նոր որսեր պատրաստած էք:

Մոզ.— Շատեր կան:

Կախարդ.— Կ'ըսուի թէ Սիւնեաց իշխանը նշանաւոր է անոնց մէջ:

Բելիար.— Ուրեմն կը հրամայեմ ձեզի, ձեր պահանջութեան շարունակեցէ՛ք:

Մոզ.— Ամենայն սիրով:

Կախարդ.— Ամենայն հաճութեամբ (կը մեկնին ամէնքն ալ):

ՏԵՍԻԼ Գ.

ԲԵԼԻԱՐ ԵՒ ՊԵԼԻ

ԲԵԼԻԱՐ.— Իմ յաւելաննական տանջանքներուս մէջ մեծ միմիթարութիւն մ'ունիմ... Իմ ոսպիս իր արբանակակներուն ձեռքով չարունակ պատգամ կուտայ թէ ինքն է յաւելաննական արգարութիւնը, բայց նոյն իսկ այն արբանեակները շատերուն հետ իմ ձեռքս մտանուած են և շարունակ պիտի մասնուին, ինքը երկնից բարձրունքը նստած կը հապարտանայ. Փոյթը չէ. Ժամանակը կը մօտենաւ, որ ահազին ճակատ մը կազմեմ և զայն գահնկեց ընելով գժոխքի և երկնից հաւասար իշխեմ. (որոտմունք և կայծակներ) շա'տ ուշ մնացիք, այդ շանթերը զիս հարուածելու շա'տ ակար են... տեսնենք ով կը յաջողի: (Դժոխքին մէջ կը մանէ իր բանակովը):

ՏԵՍԻԼ Դ.

Վասակ առանձին

— Թողէ՛ք զիս գժոխսային ճիւազներ, թողէ՛ք զիս ... ո՞ւր եմ, ով կայ հոս, ա՞ն, խիզն ներսէն զիս կը տանջէ, իսկ գուք՝ անիծեալ որդեր, մարմինս կ'ապակնէք, ա՞ն, հասի՛ր մահ, զի՞րջ տուր թշուառութեանս ... ո՞չ, չ'եմ ուզեր մեռնիլ ... ի՞նչ էի ի՞նչ եղայ ... (վերքերուն մէջէն որդեր կը հանէ) օ՛, այս ի՞նչ առնչանք այսչափ իշխանութեան մէջ... օգնութեան հուսէ՛ք, հրամաններուս սպասեցէ՛ք ... ո՞ւր են իմ հաւարիմներս, ո՞ւր է Հայաստանի թագր, ո՞ւր են իմ փառքերս ... զօրականներ, պատերազմի պատրաստուեցէ՛ք ... (մարմնոյն վերքերը կը կեռան) ո՞ւհ, ո՞ւհ, ողլացէ՛ք ի՞նձ մարդի՛կ, գթացէ՛քի՞նձ, որդեր կ'եռան մարմնոյս վրայ ... ի՞նչ վիճակ է այս, ո՞ւր կը զանուիմ, օ՞ն, անգութ մարմին. քեզի համար փառքի հետառուտ եղայ, քեզի համար հարսաւութիւն զիզեցի, քու հանգիստի համար բիւրաւոր անմեղներ զոհեցի, և դուն զիս կը տանջես... որո՞ւ զիմեմ, ո՞ւր ապակնիմ,

ամէնքը զիս թողուցին փախան... ա՞ն, Գիսա՛կո, իմ սիրելի որդի՛ս, մի՛ զրկեր զիս, զերջին անգամ դէմքդ գէթ տեսներմ, ինչո՞ւ չես ուզեր ինձ մօտենալ... ես քու հայրդ եմ... հազարաւոր անպարտներու արեամբ քու երջանկութեանդ ճամբան բացի... որո՞ւ հետ կը խօսիմ, մարդ չկայ, այս վայրերը գժոխքի սահմաններուն կը նմանին... փառքիս համար անձուկ ասպարէզ մ'է այս, աշխարհի նշաւակ եղած եմ, ուրիմն վերջ տամ այս անիծեալ կեանքիս, (սուրբ կը քաշէ ի՞նքզինքո զարնելու համար):

ՏԵՍԻԼ Ե.

Նոյն եւ Ուրուականներ (այլեւայլ խորշեր)

Ա. Ուրուական .— Կեցի՛ր:

Վասակ .— (Զէնքը ձեռքէն կիյսայ ի՞նքը սուլելով ետ ետ կը փախչի) Ո՞վ ես գուն... ճանչցայ քեզ, Վազինակ հօրեղբայրս... իմ առնչանքներս կրկնապատկելո՞ւ եկար, ես մեռացնել տուի քեզի. գուն դեռ կ'ապրիս իմ փառքերս կապակելու, մեռեալ մարդ մը պէտք չէ այսչափ անգութ ըլլայ... յուսահատէ մը ներողութիւն ինքիելու մի՛ սպասեր, հեռանամ այս ահարկու վայրեցէն: (երթալու պէս)

Բ. Ուրուական .— Ո՞ւր պիտի երթաս:

Վասակ .— Եյս ո՞վ պիտի ըլլայ. ի՞նչ կ'ուզես ի՞նձմէ, գու քահանայ մ'ես, եկեղեցւոյ մէջ վերապահէ քու խրամներդ, ես քեզ չարաչար սպաննել տուի, ո՞քափ վրէմինդիր ոզի մը ունիս, սոսկում կը պատճառես ի՞նձ, հեռանամ քեզմէ:

Գ. Ուրուական .— Հո՞սէ քու սահմանդ:

Վասակ .— Դուն վարցին, ես, վա'տ մարդ, հո՞ս ի՞նչ գործ ունիս, ես քեզ վառքիս համար զոհ ըրի... թշուա՛ռ, գուն գերեզմանէդ ալ զիս սոսկացնելու ուխալըրած ես, մի՛ մօտենար ինձի, տե՛ս մարմնոյս վիճակը... վերքերով ծածկուած եմ... որդեր կ'եռան ամեն կողմա...:

Դ. Աւրուական.— Արժանաւոր պատիժով է այդ :

Վասակ! .— Անծանօթ չէ՞ ինձ այս ձայնը . . . ահ ,
ինչո՞ւ կը գտղամ , ի՞նչ կուզես ինձմէ Վարդա՞ն , ի՞նչ
անողոք վրէժիմալբութիւն . . . գու որոշած ես մահուա-
նէդ վերջն ալ ինձ դէմ բանակ յայտւշանել . . . քու մանդ
ալ վտանգաւոր է եզեր , սոսկա՛ ինձմէ , ես Հայաստանի
թագաւորն ամ և Պարսկաստան իմ հրամաններուս կը
հպատակի . . . ձեր ամեննուգ ճանցայ , ձեր ամեննուգ արիւնն
ես վաղցուցի , կ'երեւի թէ անզօր փորձ մ'ալ ընել կ'ու-
զէք , գես քաջութիւնս երակներուս մէջ չէ՞ մարած :
Տեսէ՞ք անգո՞ւթ մարզիկ , մարմինս որդերէ կ'ապականի ,
բայց քաջութիւնս գեռ չը կրասուիք , թողէ՞ք զիս , մի՛
տանջէք զիս . . . ինչո՞ւ կը տկարանամ , ի՞նչ ցաւերս կը
սասականան . . . ասպելու պէտք ունիմ , հեռացէ՞ք քո-
վէս անզո՞ւթ ուրուտկաններ , (Արոտամունք) փառքերէս
չեմ կրնար անցնիլ , անոնք վէրքերովս գնած եմ , ահա
ամպերու մէջ կը շողայ Հայաստանի թագը . . . կ'ուզեմ ,
ինձի առէ՞ք , իմ իրաւունքս է (Չանթահար գետինը
կ'ինայ) (Սատանաները գժոխքէն դրւուս ենելով գիտկը
գժոխքէն ներս կը տանին) :

STUHL 2.

ԱՐԴՅԱԿԱՆԻՒԹ

Ա. Աւրուական .— Ասիրաւութեամբ և արիւնհեղութեամբ դ'զած անբաւ գանձերն ուր մնացին :

Բ. Ուրուական. — Իրեն հետ կարծանեցան, անսաստ և անհամառ փառատէսի մն մախճանն առ պէտք է ըսլու:

Գ. Ուրուական — Հայրենեաց անգութ մասնիչ
մը, որ իր նմաններուն արեամբ զուարձանալ կ'ուզէ, այս
արժանաւոր փոխարինութեամբ պէտք էր վարձատրուի :

Գ. Աւրուական .— Աշխարհ միշտ կը սփառի , առաքինին և մոլին շատ անգամ իրար կը չփոթէ , իսկ յաւիտենականութիւնը անսփառէ , մոլիներն ինքնարերաբար այս դժոխվքի սահմանները կը ձգուին . . . Ժամանակին հաստու , մերկնինք ասկից (ահազին ձայն մը) ահազին ձայն մը . . . վրէժինդիր խիղճ մը Վասակը կը տանջէ . . . հեռանանք ասկից : (կ'երթան)

STÜHL E.

Վասակ առանձին



ՏԵՍԻԼ Ա.

Նոյն Բելիար եւ դեւք

Բիլիար .— Ո՞վ է այս գախտականը . . . դո՛ւն ես , վասա՞կ , իմ պետութեանս մէջ մանելդ դեռ դժոխքի բոցերը չիմացան , ո՞ւր գախչիլ կ'ուզէիր . . . զիացի՛ր , խե՛ղճ արարած . իմ իշխանութեանս սահմաններէն դուս ո՞չ ոք կրնայ եղնել . . . հա՛նա , կե՛րեւի թէ ժամանակաւ մնձ իշխան մ'ըլլալուդ , հրմա ծանր կը թուի հպատակիլ , չէի՞ր գիտեր որ աշխարհի մէջ իր նմաններուն վրայ իշխողն հո՛ս պիտի հպատակի՝ իմ իշխանութեանս , միթէ քեզի ամօ՞թ կը համարդա այս ճակատագիրդ , չը սեսա՞ր քեզմէ աւելի բարձրաստիճան և հանճարաւոր մարդիկ , Փարաւոններ , Հռոմուլոսներ , Ներոններ , Շամիրամներ և գեղեցիկ աղջիկներ , որոնք իմ հզօր իշխանութեանս ներքեւ են , ուրեմն ի՞նչ է քու այս ընթացքդ . . . ինչո՞ւ կը լռես . . . չո՛ւտ պատասխանէ . . .

Վասակ (գողալով) Ներէ՛ դժոխմի իշխան , ներէ՛ , չունիմ պատասխան , յանցաւոր եմ , տանաջնքներս բուական սեսլէ :

Բիլիար .— Ներողութիւն . . . այդ դժութեան Աստուծոյ մը տկար զգացումն է , դուն զիս կը նախատես անպիտան էակ . . . նետեցէ՛ք զինքն աւելի բոցակէղ խորշ մը : (անմիջապէս դժոխմքը կը տանին բոցերուն մէջէն)

ՏԵՍԻԼ Բ.

Բիլիար եւ Դեւք

Բիլիար .— Է՛հ , Գերագո՞յն էակ . ահա քու ստեղծած մարդիկներուդ վախճանը . . . դուն կը պարծիս թէ լուսոյ մէջ կը ընակիս , տե՛ս ես այս բոցերուն մէջ քեզմէ շա՛տ հզօր իշխան մեկմ (շանթեր կիշնան) այդ օրհասական փորձերով . միմիթարուե՛ : (բոցերուն մէջէն կ'անցնի ու վարագոյր կիշնայ)

Պ. Ե Բ Զ



Ախտահանված է 1957թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0336080

41808

10
2071

Գիւ 5 դր.